

**«ԾՊՏՅԱԼ» ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Ռուբեն Մելքոնյան**

Հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ժամանակ առ ժամանակ հանդես է եկել եւ երբեմն մեծ ծավալներ ընդգրկել, այսպես կոչված, «ավազակների եւ ավազակության» խնդիրը: Ավազակները կամ թուրքերենով՝ «էջքիյաներ» կոչվածները մարդիկ էին, որոնք սոցիալական կամ այլ բնույթի անարդարությունից դրդված՝ բարձրացել են լեռները եւ զբաղվել ավազակությամբ ու դրանով փորձել տեր կանգնել ոչ միայն իրենց, այլեւ հասարակ ժողովրդի օրինական շահերին: «Բարի ավազակները», ի տարբերություն թալանչի-ոճրագործների, հասարակության լայն շերտերի մեջ ընդունվել են որպես հասարակ ժողովրդի շահերի պաշտպաններ, սոցիալական կեղեքումների դեմ պայքարող մարտիկներ. ժողովուրդն էլ, բնականաբար, ավազակների այս «ռոբինհուդյան» տեսակին ցույց է տվել իր աջակցությունն ու դրական վերաբերմունքը եւ հարկ եղած դեպքերում օժանդակել նրան:

Թուրքական մի շարք աղբյուրներում ներկայացվում են փաստեր, որոնք վերաբերում են հանրապետական Թուրքիայում գործունեություն ծավալած հայ «ավազակների» եւ «ծպտյալ» կամ իսլամացած հայ բնակչության փոխհարաբերություններին: Ինչպես ստորեւ կտեսնենք, նրանք երբեմն, թերեւս, ոչ պատահական զուգադիպությամբ, գործել են «ծպտյալ» հայերով բնակեցված տարածքներում՝ ամեն կերպ փորձելով կապեր հաստատել նրանց հետ, օգնել, սատարել, որպեսզի վերջինները հնարավորինս չհեռանան իրենց ազգային ակունքներից եւ նույնիսկ հաճախ կոչ են արել բացահայտել իրենց բուն էթնիկ պատկանելությունը:

Մի շարք թուրք հետազոտողներ, անդրադառնալով վերը նշված խնդրին, ուշադրությունը սեւեռում են հետեւյալ հարցի պարզաբանման վրա՝ հայերը ինչի՞ց դրդված են դիմում նման գործողությունների եւ անդամակցում ծայրահեղական խմբավորումների: Ըստ նրանց բնորոշման եւ բառապաշարի՝ այդ «ահաբեկիչ, անջատողական, պառակտիչ գործողություններ անող» «ծպտյալ» հայերը շատ հաճախ առաջնորդվում են վրեժխնդրության զգացումի թելադրանքով, որի պատճառը, թուրքական ձեւակերպմամբ, «1915 թվականի հայերի տեղահանությունն է»: Այս կարծիքն ապացուցելու է գալիս այն փաստը, որ ծայրահեղական

կազմակերպությունների ձերբակալված որոշ անդամների մոտ հայտնաբերվել են նաև պաստառներ, որոնց վրա գրված է եղել հետեւյալ արտահայտությունը. «Հայոց ցեղասպանության պատասխանը տալու եք»:

Թուրքական գրավոր աղբյուրներում ներկայացվում են նաև ծայրահեղական խմբավորումների անդամ որոշ հայերի տվյալներ, որոնցից որպես նմուշներ մեջբերենք մի քանիսը.

– Կարպիս Ալթընօղլի անունով մի հայ, օրինակ, նշվում է որպես ծայրահեղական կազմակերպություններից մեկի տեսաբան: Հետաքրքիր է, որ նա կրոնադարձված «ծպոյալ» հայի ժառանգ է, հայրը՝ Օհաննես Ալթընօղլին, ըստ թուրքական աղբյուրների, աքսորի երեխաներից է, այսինքն՝ ցեղասպանության ժամանակ որբ մնացածներից, եւ 1957 թվականին, դիմելով Ամասիայի քաղաքացիական հարցերով 1-ին ատյանի դատարան, վերընդունել է քրիստոնեություն, իսկ մայրը, նույնպես ամասիացի, 1921 թվականին ծնված, հայ-քրիստոնյա է, անունը՝ Սարիամ:

– Աղըյաման նահանգի Գերգեր գավառում գրանցված, իսլամացած, սակայն ծագումով հայ, Սադրբ Բաքըրջըօղլուն (նշված է նաև նրա հայկական տոհմածառը) 1996 թվականին կրոնադարձվել է, վերընդունել քրիստոնեություն, իսկ 1998-ին նույն քայլին է գնացել նաև նրա եղբայր Շեֆիք Բաքըրջըօղլուն:

– Մանվել Դեմիր, ծնվել է 1963 թվականին Կեսարիայի նահանգի Բունյան գավառի Չիդի գյուղում. ընտանիքը ճարահատյալ գաղթել է Ստամբուլ՝ իրենց գյուղի վրա կատարված հարձակումների պատճառով: Մանվելն ավարտել է Ստամբուլի Սկյութարի Սուրբ Խաչ վարժարանը: Գործել է «Օմեր» ծածկանունով եւ զոհվել 1988 թվականի հունվարի 24-ին:

Իր կյանքով եւ գործունեությամբ հատկապես հետաքրքիր է հայ «ավազակ» Օրհան Բաքըրը (իսկական անունն է Արմենակ Բաքըրջյան, ծնվել է 1953 թվականին, Դիարբեքիրում): Ստամբուլի համալսարանում սովորելուն զուգընթաց նա իր ընկերոջ՝ «Ակոս» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հետ աշխատել է հայկական Սուրբ Խաչ վարժարանում՝ որպես դասուսույց, եւ հենց այդ տարիներին էլ նրանք ակտիվորեն զվաղվել ու հետաքրքրվել են Թուրքիայի արեւելյան եւ հարավարեւելյան շրջաններում ապրող քրդախոս, իսլամացած հայերի խնդրով: Ավելին, ինչպես հետագայում խոստովանել է Դինքը, նրանք բազմիցս այցելել են այդ տարածքները, հավաքել քրդացած հայ մանուկներին եւ բերել՝ Սկյութարի Սուրբ Խաչ վարժարանում հայկական կրթություն տալու<sup>1</sup>: Այս աշխատանքներում նրանց մեծապես աջակցել է դիարբեքիրցի քահանա տեր Գրիգոսը (ըստ երեւույթին՝ Կիրակոս կամ Գրիգորիս),

որը քաջատեղյակ լինելով ամբողջ արեւելյան եւ հարավարեւելյան շրջաններին եւ շրջելով այդ վայրերով՝ ձգտել է գտնել 1915-ից հետո ցաքուցրիվ մնացած հայերին: Հիշյալ գործում իր օգնությունն է ցուցաբերել նաեւ ժամանակի Պոլսո Յայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանը:

Օրհան Բաքըրը եւ իր համախոհ ընկերներն այդ տարիներին անդամակցել են ծայրահեղ ձախակողմյան խմբավորումներից մեկին եւ դրա համար թաքցրել են նաեւ իրենց հայկական անձնանունները: Որոշ ժամանակ անց Արմենակը որոշում է «բարձրանալ լեռները», այսինքն՝ դառնալ «ավազակ», եւ հետաքրքրական է, որ նա արդեն «Ալի աղա» կեղծանունով (կողային անունով) հիմնականում գործել է Թունջելի-Էյլազիզ-Երզնկա շրջաններում եւ, ինչպես նշում են թուրքական աղբյուրները, կարողացել է կապ հաստատել նաեւ տեղի «ծպոյալ» հայերի հետ: Ինչպես հայտնի է, Յայոց ցեղասպանության տարիներին շատ հայեր ապաստան են գտել Դերսիմի քուրդ-ալեւիների, զազաների մոտ<sup>2</sup>: Օրհան Բաքըրի եւ Դերսիմի «ծպոյալ» հայերի կապերին է անդրադառնում «Ակոս» շաբաթաթերթում (27.05.2005) Ազատ Դեմիր ստորագրությամբ հոդվածագիրը, որն իր հոր եւ Օրհան Բաքըրի շփումների արդյունքում պարզել է, որ իրենք եւս ծագումով հայ են, ինչպես նաեւ տեղեկացել է, թե ովքեր են «զաղտնի քրիստոնյա» եւ «զաղտնի հայ» կոչվածները: Ազատ Դեմիրի հուշերում եւս խոսվում է, որ պետության կողմից «ավազակ, ահաբեկիչ» համարվող մարդկանց հասարակ ժողովուրդը եւ մասնավորապես իրենց համազուղացիները դրական էին վերաբերվում, լավ ընդունում եւ նրանց ընկալում իբրեւ «հեղափոխականներ»: Նա պատմում է, որ «ավազակների» խմբի ղեկավարին՝ Օրհան Բաքըրին, իր հայրն առանձնահատուկ պատվի եւ ուշադրության է արժանացրել, իսկ երբ նրանք երկուսով առանձին են եղել, խոսել ու այնուհետեւ արցունքոտ աչքերով երգել են իրեն անծանոթ մի լեզվով, որն ինչպես պարզվել է հետագայում՝ հայերենն է եղել: Օրհան Բաքըրը եւ միգուցե այլ հայ «ավազակներ» սերտ կապերի մեջ են եղել տեղի «ծպոյալ» հայերի հետ, պարբերաբար հանդիպել նրանց, փորձել նպաստել, որ նրանք իսպառ չկորցնեն ազգային նկարագիրը:

Հատկապես հետաքրքիր եւ դրամատիկ զարգացումներով հագեցած են Օրհան Բաքըրի եւ Էյլազիզի մզկիթի իմամի հարաբերությունները: Պարզվում է, որ այդ իմամը իրականում նույնպես «ծպոյալ» հայ է. նրա ամբողջ ընտանիքը զոհ է գնացել ցեղասպանության տարիներին, եւ ինքն էլ, վիրավոր վիճակում, մի կերպ է փրկվել: Սակայն ամենահետաքրքրականը եւ սահմելեցուցիչն այն է, որ այդ իմամը իրականում հայ քահանա

է, որը ցերեկները մզկիթում հանդես է գալիս որպես իմամ, իսկ գիշերներն իր տան նկուղում կառուցած գաղտնի եկեղեցում քահանայություն է անում (ի դեպ, ավելորդ չէ նշել, որ այսպիսի իմամ-քահանաների գոյության մասին հանդիպում ենք նաեւ այլ աղբյուրներում): Ծպտյալ քահանան էլ Օրհան Բաքըրը հանդիպում են հենց այդ ընդհատակյա նկուղային եկեղեցում, զրուցում էլ բանավիճում տարբեր հարցերի շուրջ: Օրհանը ցանկություն է հայտնում, որ նա վերադառնա իր իրական ինքնությանը եւ չթաքցնի իր ծագումը, սակայն ծպտյալ քահանան այդ առաջարկին համաձայն չի լինում: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ Օրհան Բաքըրը շարունակել է դեռեւս ուսանելու տարիներին սկսած գործունեությունը, այն է՝ վերադարձնել Հայոց մնացորդաց իրենց ազգային ակունքներին:

Օրհան Բաքըրը տարիներ շարունակ հետապնդման մեջ է եղել եւ 1980 թվականի մայիսի 13-ին Էյրազիզի նահանգի Քարաքոչան գավառում, ընկնելով ծուղակի մեջ, զոհվել է: Օրհանի մահից հետո իր ընկերները գաղտնի փախցրել են նրա աճյունը եւ, իր իսկ կտակի համաձայն, թաղել Ֆարաչ լեռներում: Նրա հուղարկավորությունը վերածվել է մեծ արարողության, որին, ըստ վերոնշյալ հոդվածում տեղ գտած փաստերի, մասնակցել են հազարավոր մարդիկ, ենթադրաբար նաեւ մեծ թվով «ծպտյալ» հայեր<sup>3</sup>:

Այսպիսով, թուրքական աղբյուրների վերը բերված փաստերն ի հայտ են բերում «ծպտյալ» հայերի հետ կապված նոր իրողություններ ու ծալքեր, որոնք վկայությունն են այն բանի, որ մեր ապրող արյան մեջ մշտաբար են Մեծ եղեռնի հասցրած ցավն ու արդար հատուցման տենչը: Ի դեպ, վերջին տարիներին Թուրքիայում հրատարակվող գրքերը, հոդվածները, ուսումնասիրությունները, ներկայացնելով իսլամ ընդունելու միջոցով «փրկված» հայերին, ինչպես եւ սպասելի էր, սկսել են արտահայտել այն միտքը, թե այդ բոլորն անառարկելի ապացույցներ են, որ 1915-ի դեպքերը ցեղասպանություն չի կարելի որակել, քանի որ ոչ բոլոր հայերն են կոտորվել: Սակայն, ակնհայտորեն, թուրք հեղինակներն անտեսում են այդ «ծպտյալ» եւ իսլամացած հայերի ի հայտ գալու պատճառները՝ միտումնավոր խոսք չբացելով այն մասին, որ ֆիզիկական «փրկությունը» իրագործվել է ազգային եւ կրոնական նկարագրի խեղման գնով:

Թուրքական քարոզչամեքենան ի չարն է օգտագործում նաեւ ծայրահեղական խմբավորումներում ծագումով հայերի ընդգրկման փաստը եւ ամեն կերպ ուշադրություն հրավիրելով այդ հանգամանքի

վրա՝ փորձում է ցույց տալ, որ հայերն իրենց բնույթով ահաբեկիչ են եւ ապստամբ: Այս նուրբ թեմայի մասին խոսելիս, կարծում ենք, պետք է շրջահայաց լինել եւ ուշադրություն դարձնել վերը ասվածների վրա, համոզիչ ապացույցներով իրազեկել, որ ծայրահեղական խմբավորումների շատ թվով հայեր արդարացի վրիժառուի կամ «բարի ավազակի» նկարագիր ու էություն ունեն, եւ դրա վառ ապացույցն են նրանց ու հասարակ ժողովրդի փոխադարձ ջերմ հարաբերությունները: Բացի այդ, վերոնշյալ հայերի խնդիրը քննելիս չպետք է անտեսել նաեւ հոգեբանական կողմը եւ այն, որ շատ հայ «ավազակներ» գործել են հատկապես «ծպտյալ» հայերով բնակեցված տարածքներում: Ձախակողմյան, այն էլ ծայրահեղ ձախակողմյան խմբավորումների անդամ հայ «ավազակները» փորձել են ծպտյալ հայերի շրջանում աշխատանքներ իրականացնել, որպեսզի նրանք վերադառնան իրենց արմատներին կամ ամուր պահեն դրանք, եւ միգրացե դա տվել է նաեւ որոշակի արդյունք: Այս ամենը մեզ թույլ է տալիս նաեւ ինչ-որ տեղ նրանց համարել «ազգապահպան վրիժառուներ»: Եվ եթե չլինեին թուրքական տիրապետության հենց սկզբից ի վեր իրագործվող ազգային-կրոնական բռնաճնշումները, եթե չլիներ Հայոց ցեղասպանությունը, մարդիկ ստիպված չէին լինի դառնալ «ծպտյալ», վրիժառու եւ «բարի ավազակներ»....

<sup>1</sup> Ավելորդ չէ նշել, որ Հրանտ Դինքի կինը՝ Ռաբելը, նույնպես քրդացած էրմենի վարժ աշիրեթից է:

<sup>2</sup> Այստեղ ապաստանած հայերի մասին տարբեր աղբյուրներ նշում են տարբեր թվեր՝ 20 հազարից մինչեւ 40 հազար: Սրանց մի մասը տարիների ընթացքում ձուլվել է քրդերի հետ եւ մեծապես կորցրել ազգային դիմագիծը, սակայն որոշ մասի մոտ դեռեւս պահպանվում են ազգային-կրոնական նկարագրի որոշ նշույլներ: Հայտնի է, որ զազաները հարգանքով են վերաբերվում հայկական քրիստոնեական սրբավայրերին, նրանց խոսվածքում երբեմն հանդիպում են կիսաաղավաղված հայերեն բառեր եւ այլն:

<sup>3</sup> Նշենք նաեւ, որ Օրհան Բաքըրի եւ այլ հայ «ավազակների» կյանքը եւ գործունեությունը դարձել են գրականության հետաքրքրության առարկա, եւ Մուրադ Քահրաման անունով մի հեղինակ գրել է «Եիչ» վերնագրով գիրք նրանց մասին:

## **ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ**

### ***Սուրեն Սարյան***

Այսօր ընթացող զարգացումները ցույց են տալիս, որ նախկին հետխորհրդային տարածքն ապրում է լուրջ վերափոխում: Այդ տարածքը փաստորեն դադարում է գոյություն ունենալ՝ փոխարինվելով նոր տարածաշրջաններով, եւ եթե Ռուսաստանը դիտում էր այն որպես իրեն ենթակա նախկին խորհրդային հանրապետությունների միավորում, ապա ԱՄՆ-ի, ԵՄ-ի կամ ՉԺՀ-ի համար նախկին հետխորհրդային տարածքն այլեւս գոյություն չունի եւ նրանց համար դրա կազմը բոլորովին այլ տեսք ունի:

Ներկայումս հետխորհրդային տարածքում ձեւավորվում է բոլորովին նոր աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական կոնֆիգուրացիա: Այդ կոնֆիգուրացիան բնորոշվում է առնվազն չորս նոր տարածաշրջանների կամ ուժային կենտրոնների առաջացմամբ. ինքը՝ ՌԴ-ն, Կենտրոնական Ասիան՝ Ղազախստանի գլխավորությամբ, Արեւմտյան տարածաշրջանը՝ Ուկրաինայի գլխավորությամբ եւ Հարավային Կովկասը, որտեղ այսօր բացահայտ առաջնորդ չկա:

Ըստ էության, Ուկրաինան, Բելառուսը, Հարավային Կովկասը եւ Կենտրոնական Ասիան դադարել են համարվել Ռուսաստանի հետնաբակը կամ եվրասիական գավառ: Այսուհետ նրանք բոլորը պետք է ինքնուրույն կառուցեն իրենց հարաբերությունները գլոբալ (ԱՄՆ, ԵՄ, Չինաստան) եւ տարածաշրջանային (Լեհաստան, Թուրքիա, Իրան, Պակիստան) դերակատարների հետ:

Ընդհանրապես, «հետխորհրդային» հասկացությունն ընտրվել էր հիմնականում արեւմտյան հետազոտողների կողմից, որով նրանք փորձում էին շեշտել ԽՍՀՄ-ի քայքայման արդյունքում առաջացած նորանկախ պետությունների ընդհանուր ծագումը եւ սոցիալ-քաղաքական յուրահատկությունները (խորհրդային Միության կարիքները սպասարկող ընդհանուր տնտեսական կապերը, ընդհանուր ռազմական ենթակառուցվածքները՝ ռուսական-խորհրդային բանակների մոդելների շրջանակներում, ռուսերեն լեզվի շնորհիվ ընդհանուր լեզվական հաղորդակցությունը): Ընդհանուր պատմական, քաղաքական եւ տնտեսական արմատներն այլեւս էական ազդեցություն նորանկախ պետությունների վրա չունեն: Բազում փորձագետներ նշում են, որ եկել է ժամանակն ընդունելու «հետխորհրդային տարածքի» վերջի փաստը: Անշուշտ,

«սովետականության» պատմական ազդեցությունը դեռ իրեն զգալ է տալիս եւ որոշ ժամանակ դեռ կտա, հատկապես՝ Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Սակայն նորանկախ պետությունների ռազմավարության համար «հետխորհրդային տարածքն» այժմ դադարում է լինել զլխավոր գերակայություն:

Հետխորհրդային տարածքում դեռեւս գործում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսին են ԱՊՀ-ն, Միասնական տնտեսական տարածությունը, Եվրասիական տնտեսական համագործակցությունը, ՀԱՊԿ-ը, ՎՈՒԱՄ-ը, սակայն դրանք բոլորը կրում են ժամանակավոր բնույթ՝ միավորելով իրենց անդամներին ընթացիկ խնդիրների եւ նպատակների լուծման շուրջ:

Նույն ԱՊՀ-ն մնաց միայն որպես նրա երկրների նախագահների հանդիպումների ակունք՝ ապահովելով ըստ էության մեկ գործառույթի կատարումը՝ իրականացնել խորհրդային ժառանգության քիչ թե շատ խաղաղ բաժանումը: Անգամ նախկին հետխորհրդային կառույցներից ամենաարդյունավետը համարվող՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը կրում է մեծ մասամբ ձեւական բնույթ, քանի որ դժվար է պատկերացնել, որ, օրինակ, Հայաստանը կամ Ղազախստանն իրենց գորքերն ուղարկեն Բելառուսի վրա հարձակման դեպքում՝ ՆԱՏՕ-ի դեմ կռվելու համար, կամ հայ ու բելառուս զինվորները մեկնեն Կենտրոնական Ասիա՝ այն չինական կամ իսլամիստական ներխուժումից պաշտպանելու համար:

Արդեն 2001 թվականից հետո իրավիճակը հետխորհրդային տարածքում սկսեց զգալիորեն փոխվել: ԱՄՆ-ը, ԵՄ-ը, ՆԱՏՕ-ն եւ Զինաստանը փաստորեն վերացրին այս տարածք մուտք գործելուն վերաբերող իրենց սահմանափակումները: Այստեղ հայտնվեցին ամերիկյան ռազմակայաններ, իսկ Եվրոպական եւ չինական ներդրումները վաղուց գերազանցել են ռուսական տնտեսական ներկայությունն այնպիսի երկրներում, ինչպիսին են Ուկրաինան, Վրաստանը, Ղազախստանը կամ Բելառուսը: Վերջապես, Վրաստանում եւ Ուկրաինայում տեղի ունեցած «գունավոր» հեղափոխությունները եւ Ղազախստանի ու Բելառուսի ինքնուրույն աշխարհաքաղաքական ու տնտեսական խաղը Ռուսաստանին զրկեցին հետխորհրդային տարածքում մենատիրությունից: Վերջին ռուս-բելառուսական առեւտրատնտեսական եւ վառելիքային «պատերազմներից» հետո ոչ ոք չուրջ չի ընդունում Ռուսաստան-Բելառուս միությունը, երբ ռուսական ճնշման տակ գտնվող բելառուսական ղեկավար Ա.Լուկաշենկոն սկսեց մերձեցման քայլեր անել Եվրոպայի, հատկապես՝ իր հարեւան Ուկրաինայի, Լիտվայի եւ Լեհաստանի հետ:

Փաստորեն, նախկին խորհրդային Եվրաարեւելքի երկրները՝ Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը, ինչպես նաև Հարավային Կովկասի երկրները ԵՄ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ հանդիսացող Լեհաստանի, Լատվիայի, Լիտվայի, Ռումինիայի, Բուլղարիայի հետ միասին մտնում են Բալթյան-Սեւծովյան տարածաշրջանի մեջ: Այսօր հիմնականում խոսքը ոչ թե ռազմական սպառնալիքների, այլ առելտրատնտեսական եւ մշակութային բախումների մասին է, եւ այս առումով այդ նոր Բալթյան-Սեւծովյան տարածաշրջանը կոչված է լինելու բուժեր ծառայել Ռուսաստանին եւ Թուրքիային, որոնք թեւ Արեւմուտքի կողմից դիտվում են որպես իր ազդեցության ոլորտներ, սակայն երբեւէ «արեւմտյան» կամ «եվրոպական» երկրներ չեն համարվելու:

Սեւծովյան տարածաշրջանի հետ է կապվում նաև Կովկասյան տարածաշրջանը, ընդ որում, մի օղակի մեջ են դիտվում Վրաստանը (որը ներկա փուլում վայելում է Արեւմուտքի լիակատար աջակցությունը՝ ձգտելով դառնալ տարածաշրջանի առաջնորդ) եւ Հայաստանը (որն իր ներուժով ունակ է վերցնել առաջնորդի դերակատարումը), իսկ Ադրբեջանը դասվում է ավելի շուտ Կասպիական ավազանի երկրների շարքին: Սակայն եթե ԵՄ-ը հակված է միասնաբար դիտարկել Կասպիական տարածաշրջանի մեջ Ադրբեջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը (այսինքն՝ իր ապագա խոշորագույն էներգամատակարարների), ապա Միացյալ Նահանգները Կասպիական ավազանը դիտում է «Մեծ Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի շրջանակներում, որտեղ ընդգրկված են նաև Ուզբեկստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը եւ Աֆղանստանը:

Հատկանշական է, որ նախկին հետխորհրդային տարածքում ԵՄ-ը այսօր վարում է բավական համերաշխ քաղաքականություն, որտեղ դերակատարումները բաշխված են Միության հին ու նոր անդամների միջեւ, իսկ Եվրոպայի հետ հարաբերվելու համար յուրաքանչյուր հետխորհրդային պետություն պետք է գործեր վարի ոչ թե առանձին-առանձին Գերմանիայի, Իտալիայի կամ Բուլղարիայի, այլ հենց Միության հետ: Եվ եթե նախկինում Ռուսաստանին հատկացվում էր ԱՊՀ պետությունների հետ հարաբերություններում Եվրոպայի միջնորդի դերակատարում, ապա այսօր ԵՄ-ը Մոսկվայի կարիքն այլեւս չունի: Այսօր Ուկրաինան կամ Հարավային Կովկասը համարվում են ոչ թե Ռուսաստանի «ներծավոր արտերկիրը», ինչպես դա եղել է 1990-ականներին, այլ դարձել են հենց Եվրոպայի «ներծավոր հարեւանները»: Ըստ էության, «Եվրոպական նոր հարեւանություն» (ԵՆՀ) ծրագիրը կոչված է արձանագրել նախկին հետխորհրդային տարածքի վերափոխման ընթացքը:



Ավելին, ինչպես նշում է գերմանացի հայտնի փորձագետ Ալեքսանդր Ռարը, ԵՄ-ը պետք է ուղղի այն մեծագույն սխալը, որով նա ԵՆՀ շրջանակներում Յուլիսային Աֆրիկայի պետությունների հետ նույն շարքին դասեց Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, Հայաստանն ու Վրաստանը, մինչդեռ վերջիններս պետք է լրջորեն դիտվեն Միության անդամակցության շրջանակներում, թեկուզ ոչ մոտակա ապագայի կտրվածքով: Ամեն դեպքում, Արեւելյան Եվրոպայի եւ Հարավային Կովկասի մուտքը ԵՄ-ի «մերձավոր հարեւանություն» նշանակում է նաեւ նրանց մուտք Միության թեկնածուական «միջանցք»: Այս առումով բավական հավանական է դառնում, որ հենց ԵՄ-ը իր վրա կվերցնի վերոհիշյալ տարածաշրջաններում քաղաքական հակամարտությունները կարգավորողի եւ էներգետիկ նախագծերի օպերատորի դերակատարումը:

ՆԱՏՕ-ի հետ Ուկրաինայի եւ Վրաստանի ինտեգրումը, ինչպես նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի կապերի ինտենսիվացումը բերեցին նրան, որ բացի ռուսական ռազմական ազդեցությունից եւ ենթակառուցվածքներից՝ նախկին հետխորհրդային տարածքում հայտնվեց նոր, ավելի արդիական խաղացող՝ ի դեմս Յուլիսատլանտյան դաշինքի եւ նրա անդամների: Եվ նույնպես շատ հավանական է, որ հաջորդ տարի կայանալիք ՆԱՏՕ-ի գազաթափողվում խորվաթիայի, Մակեդոնիայի եւ Ալբանիայի կողքին հնչեն Վրաստանի եւ, ընտրություններում արեւմտամետ ուժերի հաղթանակի դեպքում, Ուկրաինայի անունները:

Ամեն դեպքում, այսօր Արեւելյան Եվրոպայի եւ Հարավային Կովկասի պետությունների անդամակցությունը ԵՄ-ին եւ ՆԱՏՕ-ին այլեւս չի թվում ինչ-որ ֆանտաստիկ գաղափար, ինչպես տասը տարի առաջ:

Իրոք, Ռուսաստանն այլեւս չի դիտվում որպես նախկին հետխորհրդային տարածքում կառուցվածքաստեղծ գործոն: Արդեն այսօր Ռուսաստանը չի հանդիսանում որեւէ նախկին խորհրդային հանրապետության թիվ մեկ առեւտրային գործընկերը: Չի կարելի նաեւ միանշանակ պնդել, որ նրա համար էներգակիրների հետ կապված իրադրությունը շարունակելու է մնալ նպաստավոր: ՌԴ-ն բախվում է նավթի եւ գազի արդյունահանման խնդիրներին, քանի որ օգտագործում է դեռեւս խորհրդային ժամանակներում շահագործված հանքերը եւ փաստորեն սպառում է խորհրդային ժառանգությունը: Իսկ այդ ենթակառուցվածքներն արդիականացնելու համար Մոսկվան կարիք ունի լուրջ ներդրումների եւ նոր տեխնոլոգիաների: Նման ռեսուրսներ Ռուսաստանն այսօր չունի եւ պետք է դիմի Արեւմուտքի օգնությանը: Իսկ այդ օգնության դիմաց պետք է վճարել:

Անշուշտ, Ռուսաստանը դեռևս մնում է որպես խոշոր եվրասիական տերություն, որն ունի բավական մեծ ռազմական հզորություն եւ որի ներկայությունը չի կարելի արհամարհել: Սակայն բոլոր հաշվարկներում նա հանդես է գալիս որպես ԱՄՆ-ի, Եվրոպայի կամ Չինաստանի ոչ հավասար գործընկեր: Փաստ է նաեւ, որ Ռուսաստանն այլևս չի ֆինանսավորելու նախկին խորհրդային երկրներին՝ անցում կատարելով ավանդական միջպետական հարաբերությունների մոդելին, որը հիմնվում է սեփական շահերի պաշտպանության վրա, եւ այդ շահերն ընկած են հիմնականում ոչ թե ռազմաքաղաքական, այլ տնտեսական ու էներգետիկ ոլորտում:

Փաստորեն, նախկին ԽՍՀՄ-ի արեւմտյան հատվածը համախմբվում է Լեհաստան–Լիտվա–Ուկրաինա առանցքի շուրջ, որը կարող է դառնալ նաեւ «նոր» Եվրոպայի միջուկը: Մոլդովան կարծես թե անշեղորեն ընթանում է դեպի Ռումինիայի հետ վերամիավորում: Իսկ ահա Բելառուսը գրեթե պատրաստ է անդամակցել Եվրամիությանը, քանի որ նրա տնտեսական ենթակառուցվածքները լիովին համապատասխանում են Միության պահանջներին. խնդիրը մնում է միայն Լուկաշենկոյի նախագահության ավարտի ժամկետը: Հարավային Կովկասի ապագան կախված կլինի մեծ մասամբ Թուրքիայի եւ Իրանի շուրջ ընթացող զարգացումներից: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ընթացքը եւ Իրանի հնարավոր վերափոխումն ու Արեւմուտքի հետ նրա գործընկերության հաստատումը վերջնականապես կորոշեն կշեռքի նժարը մեր տարածաշրջանում:

Իսկ կենտրոնաասիական հատվածը ներկայումս համախմբվում է Ղազախստանի շուրջ: Այժմ հենց Ղազախստանն է դառնում Եվրոպայի համար էներգետիկ ռեսուրսների առավել խոշոր հավանական «պրովայդերը»: Այս առումով պատահական չէ, որ վերջերս Ղազախստանն ամրագրվեց որպես մասամբ Եվրոպական պետություն (Եվրոպական քարտեզներում ներկայումս մայրցամաքի սահմանի մեջ է մտնում Ղազախստանի հյուսիսարեւմտյան հատվածը, ընդ որում, հենց այն հատվածը, որտեղ գտնվում են այս երկրի հիմնական նավթային պաշարները): Բացի այդ, Աստանան լրջորեն հավակնում է 2009 թվականին դառնալ ԵԱՀԿ նախագահող երկիր: Վերջապես, Ղազախստանն այսօր միակ կենտրոնաասիական պետությունն է, որ լրջորեն համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ՝ ծրագրելով հասնել Անհատական գործընկերության ծրագրի ստորագրմանը: Անգամ չի բացառվում, որ Ղազախստանին տրվեն ԵՄ ասոցացված անդամության առավելություններ:

Ղազախստանի վրա գրավ են դնում նաեւ ԱՄՆ-ն ու Չինաստանը:

Ամերիկյան դիվանագետները շեշտում են, որ տեսնում են «դինամիկորեն զարգացող Ղազախստանը՝ որպես տարածաշրջանի առանցքային երկիր»: Իսկ Չինաստանին հաջողվեց Ռուսաստանին երկրորդական դեր վերագրել Շանհայի համագործակցության կազմակերպությունում. ՇՀԿ-ի միջոցով Պեկինը ցույց է տալիս իր ռազմաքաղաքական եւ աշխարհաքաղաքական աճող եւ հաստատուն ներկայությունը Կենտրոնական Ասիայում: ՇՀԿ-ն, որն առաջ գործում էր «Չինաստան, գումարած Ռուսաստան, գումարած Կենտրոնական Ասիա» բանաձեւով, այսօր գործում է «Չինաստան, գումարած մնացածները» բանաձեւով:

Այսպիսով, հետխորհրդային տարածք հասկացությունը դադարում է գոյություն ունենալ: Այս տեսանկյունից մենք վկա ենք դառնում, մի կողմից, դեպի արեւելք տեղի ունեցող Արեւմուտքի շարժմանը եւ, մյուս կողմից, դեպի արեւմուտք Չինաստանի շարժմանը: Ուստի, Արեւմուտքին եւ Չինաստանին պետք է ինչ-որ սահման, որը ցույց կտա, որ դրանից այն կողմ նրանց շահերը չեն տարածվում: Տվյալ դեպքում Յարավային Կովկասը՝ որպես առավելապես եվրոպական ազդեցության եւ Կենտրոնական Ասիան՝ որպես չինական ազդեցության տակ գտնվող տարածաշրջաններ, կարող են համարվել այդպիսի սահմանակետեր՝ կատարելով Չինաստանի եւ Արեւմուտքի միջեւ կամուրջի դերը:

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
Գազիկ Տեր-Հարությունյան**

Ռուսաստանը վերականգնում է իր ռազմաքաղաքական եւ տնտեսական դիրքերը գլոբալ հարթությունում, եւ պետք է ընդունել, որ այդ տերության ռազմավարությունը ներկայումս հայեցակարգային բնույթ է կրում: Նման իրողությունը պայմանավորված է ոչ միայն տնտեսական վերելքով եւ պետության կայացումով: Այդ գործընթացներին զուգահեռ համակարգվում է ռուսական քաղաքական միտքը, հստակեցվում են գաղափարախոսական դրույթները («պահպանողականություն», «ինքնիշխան ժողովրդավարություն»), մշակվում է արդիական ռազմական դոկտրին, վերանայվում է ազգամիջյան հարաբերությունների հայեցակարգը եւ այլն: Պետք է, թերեւս, համաձայնվել փորձագիտական այն գնահատականների հետ, համաձայն որոնց՝ այսօր տեղի է ունենում ռուսական ազգի ձեւավորման (կամ վերաձեւավորման) մի գործընթաց, երբ նա փորձում է իմաստավորել/վերիմաստավորել իր տեղը եւ առաքելությունն աշխարհում:

Վերոնշյալ իրողությունների վկայությունն է ՌԴ ԱԳՆ-ի կողմից վերջերս կազմված եւ հրապարակված «Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության տեսությունը» փաստաթուղթը, որը փաստորեն հանդիսանում է այդ տերության արտաքին քաղաքականության հայեցակարգը: Հատկանշական է, որ հայեցակարգի մշակման գործընթացին մասնակցել են տասնյակից ավելի հետազոտական հաստատություններ եւ կենտրոններ: Համաձայն փաստաթղթի հեղինակների, այսօր ՌԴ-ն ներգրավվում է միջազգային կյանքի բոլոր ոլորտները, եւ հայեցակարգի ստեղծման գերխնդիրն է այդ նոր պայմաններին «հոգեբանորեն եւ ինտելեկտուալ առումով պատրաստվելը»:

Ակնհայտ է, որ հանրային բնույթի նման փաստաթղթերը չեն արտացոլում այս կամ այն երկրի ռազմավարության բոլոր նրբությունները: Սակայն հաշվի առնելով ՀՀ-ՌԴ հարաբերությունների առանձնահատուկ նշանակությունը՝ կարելու է ամրագրել հայեցակարգի ընդհանուր տրամաբանությունը եւ կիրառված տերմինաբանությունը, ինչպես

նաեւ համառոտ անդրադառնալ ՀՀ-ի հետ այս կամ այն չափով առնչվող որոշ խնդիրների:

Վերոնշյալի համատեքստում արձանագրենք, որ դիտարկվող փաստաթղթում ՌԴ արտաքին քաղաքականությունում ելակետային են համարվում հետեւյալ հիմնադրույթները.

❖ *ՌԴ-ն վերականգնել է իր ինքնուրույնությունն արտաքին քաղաքականության ոլորտում:* Այսպիսով անուղղակիորեն փաստվում է, որ հետսառըպատերազմյան՝ Ելցինյան դարաշրջանում Ռուսաստանը փաստորեն կորցրել էր իր ինքնիշխանությունը:

❖ *Ներկայիս աշխարհաքաղաքական մրցակցությունն ընթանում է քաղաքակրթական հարթությունում:* Այս դրույթն ընդգծում է ազգային/քաղաքակրթական արժեքային համակարգերի եւ զարգացման ուղիների կարեւորությունը: Միեւնույն ժամանակ փաստաթղթում, նկատի ունենալով, թերեւս, քաղաքակրթական բախումների վերաբերյալ Հանտինգտոնի դոկտրինը, նշվում են քաղաքակրթական գործոնի դրսեւորման նաեւ բացասական հետեւանքները:

❖ *Գլոբալացումը հանգեցնում է համաշխարհային ռեսուրսների ավելի հավասարաչափ բաշխման, ինչն իր հերթին «օբյեկտիվ հիմք է ստեղծում բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորման համար»:* Հայեցակարգում նշվում է, «որ միաբեւեռության առասպելը վերջնականորեն փլուզվեց Իրաքում»: Այս դրույթը որոշակիորեն ուղղված է ամերիկյան մոտեցումների դեմ, քանի որ համաձայն ամերիկյան ներկա վարչակազմի պատկերացումների եւ մասնավորապես՝ Քոնդոլիզա Ռայսի հայտարարությունների, գլոբալացումը պետք է հանգեցնի ազգային պետությունների վերացմանը եւ ուժի մի կենտրոնից ղեկավարվող համակարգի հաստատմանը:

Այս վերջին կետի առիթով նկատենք, որ ընդհանուր առմամբ հայեցակարգի տրամաբանությունն ուղղված է ԱՄՆ-ի գերակայության դեմ: Մասնավորապես ԱՄՆ-ին վերաբերող ենթաբաժնում նշվում է, որ Միացյալ Նահանգների հետ Ռուսաստանի հարաբերությունների հիմնական բարդությունն այն է, որ ամերիկյան կողմը փորձում է ընդունել «առաջնորդողի» կամ «գործերը վարողի» կեցվածք: Կարելի է կարծել, որ այդ հանգամանքն իրոք առանցքային նշանակություն ունի ՌԴ-ի համար, եւ չպետք է բացառել, որ եթե ԱՄՆ-ի կողմից կատարվեն որոշակի փոխզիջումային քայլեր, ապա դա կարող է հանգեցնել

մարտավարական հարթությունում այդ տերությունների հարաբերությունների կարգավորմանը:

ՌԴ ԱԳՆ-ի պատկերացումների համաձայն, բազմաբեւեռ համակարգում աճելու է մեծ տերությունների պատասխանատվությունը գլոբալ գործընթացներում: Ըստ այդմ, նոր իրավիճակում պետք է ձեւավորվի առաջատար տերությունների մի խումբ, որը եւ պետք է կարգավորի միջազգային հարաբերությունների համալիրը: Այդ տեսակետը համընկնում է ամերիկյան քաղաքական ընտրանու մի մասի տեսակետների հետ, համաձայն որոնց՝ ամերիկյան բացարձակ գերակայությունը ժամանակավոր երեւոյթ է եւ դրան հետեւելու է ԱՄՆ «նահանջը»: Սակայն, ըստ ամերիկացիների, դա չի նշանակում, թե իրենք հեռանում են «մեծ քաղաքականությունից», այլ ընդամենը «օպտիմիզացնում» են իրենց ռազմավարությունը եւ «հարմարվում» ստեղծված նոր պայմաններին: Մասնավորապես, ենթադրվում է առաջատար տերությունների խմբի ձեւավորում (դրա նախադեպը ներկայիս «ութնյակն» է, որին մոտ ապագայում հավանաբար կմիանան Չինաստանը, Յնդկաստանը, Բրազիլիան), որը պետք է «կառավարի աշխարհը», եւ այդ «ընտրյալ հասարակությունում» ԱՄՆ-ը պետք է պահպանի առաջատարությունը՝ բայց ոչ բացարձակ գերակայությունը, այսինքն՝ լինի «առաջինը հավասարների մեջ»: Կարծես թե ռուսաստանյան փորձագետները համամիտ են նման մոտեցման հետ, որն, ի դեպ, թույլ կտա մեղմել ներկայիս «սառը պատերազմյան» տրամաբանությունը եւ տեղափոխվել «համաշխարհային կոլեկտիվ կառավարման եւ պատասխանատվության» դարաշրջան:

Հայեցակարգում, միջազգային անվտանգության համատեքստում, հատուկ տեղ է հատկացվում սպառազինությունների հետ կապված հետեւյալ հիմնախնդիրներին.

❖ ԱՄՆ «Հակահրթիռային պաշտպանության պայմանագրից» դուրս գալուն եւ տիեզերքում սպառազինության տեղակայմանը:

❖ «Միջին եւ փոքր հեռահարության հրթիռների վերաբերյալ» պայմանագրին<sup>1</sup>:

❖ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի խախտումներին:

❖ Քիմիական եւ կենսաբանական զենքերի արգելման կոնվենցիաներին (որոնք հրաժարվում է ստորագրել ԱՄՆ-ը):

Որպես նորույթ կարելի է արձանագրել փաստաթղթում Միջազգային տեղեկատվական անվտանգության խնդրին գլոբալ նշանակության

«մարտահրավերի» կարգավիճակ տալը. դա վկայում է, որ այսօր ՌԴ իշխանությունները սկսել են կարեւորել տեղեկատվական ոլորտը:

Հակամարտությունների կարգավորման խնդիրներում (որոնցից առաջնահերթությունը տրվում է Մերձավոր Արեւելքում ընթացող արաբա-իսրայելական եւ ԱՄՆ-Իրան չկարգավորված հարաբերություններին) ՌԴ ԱԳՆ-ի հիմնական թեզերն են հանդիսանում.

❖ «Վերջնագրերի» եւ «ուժի կիրառման» քաղաքականության անընդունելիությունը, որը բոլոր կողմերին «տանում է փակուղի»:

❖ «Հակամարտողների մեկուսացման» անթույլատրելիությունը, քանի որ կարգավորմանը կարող է նպաստել միայն նրանց ներգրավումը քաղաքական գործընթացին: Այս ենթաբաժնում հիշատակվում են նաեւ անդրկովկասյան հակամարտությունները եւ Կոսովոն, որին անկախություն շնորհելը, համաձայն ՌԴ ԱԳՆ-ի, անընդունելի է եւ «հղի լուրջ բարդություններով եվրոպայի կայունության համար»:

Իրաքում տիրող իրավիճակի վերաբերյալ հայեցակարգում նշվում է, թե այդ երկրում Ալ-Մալիքիի շիական կառավարությանը Վաշինգտոնի եւ Թեհրանի կողմից զուգահեռ ցուցաբերվող աջակցությունը պետք է ընդունել որպես կառուցողական հանգամանք: Նման լավատեսական մոտեցումը հայտնի է վերլուծաբանական հանրությունում եւ ընկալվում է որպես հնարավոր ընդհանուր եզր ԱՄՆ-Իրան հարաբերությունների կարգավորման տեսակետից:

Հայեցակարգում հանգամանորեն ներկայացված են առանձին տարածաշրջանների եւ երկրների հանդեպ ՌԴ արտաքին քաղաքականության ուղեւիշները: Ընդգծվում է այն դրույթը, թե ԱՊՀ երկրների հետ հարաբերությունները ՌԴ-ի համար առաջնային են, իսկ անդրկովկասյան տարածաշրջանը ՌԴ-ի «տարածքային ամբողջականության» եւ անվտանգության տեսակետից առանցքային նշանակություն ունի: Այդ բաժնում ներկայացված են հայտնի սկզբունքային եւ անզիջում մոտեցումները Վրաստանի վարած քաղաքականության վերաբերյալ, իսկ վրաց-աբխազական եւ վրաց-օսական հակամարտությունների կապակցությամբ նշվում է, որ դրանք պետք է լուծվեն «բացառապես խաղաղ եղանակով»՝ հաշվի չառնելով «ժամանակային եւ կարգավիճակային շրջանակները»:

Հատկանշական է, որ փաստաթղթում *Լեռնային Ղարաբաղի կարգավորումը (այն չի անվանվում հակամարտություն) համարվում է ոչ այնքան սուր խնդիր*, որը պետք է լուծվի ՀՀ-Ադրբեջան ուղիղ

բանակցությունների միջոցով, որոնց ընթացքին պետք է աջակցեն Մոսկվան, Փարիզը եւ Վաշինգտոնը (ԵԱՀԿ շրջանակներում): Ի դեպ, փաստաթղթում Ադրբեջանը բնորոշվում է որպես ստրատեգիապես կարելոր գործընկեր, իսկ Հայաստանը՝ ստրատեգիական գործընկեր, որի հետ հարաբերությունները կրում են կայուն դաշնակցային բնույթ:

Եզրափակելով նշենք, որ արտաքին քաղաքականության հայեցակարգային դրույթների մշակումը հրատապ է նաեւ ՀՀ-ի համար: Առավել եւս, որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը որոշակի հիմք է ծառայում նման աշխատանքների վարման համար:

---

<sup>1</sup> Արեւելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղադրման առիթով ռուսաստանյան փորձագետները հաճախ են անդրադառնում նշված պայմանագրին այն ենթատեքստում, թե այն միակողմանի բնույթ է կրում եւ ՌԴ շահերը պահանջում են դուրս գալ համաձայնությունների շրջանակներից: Որպես հիմնավորում նշվում է Ռուսաստանի հարավային հարեւանների մոտ (Չինաստանում, Պակիստանում եւ Իրանում) նման հեռահարության հրթիռների առկայությունը: Նման հրապարակումներով ՌԴ-ն փորձում է տեղեկատվական ճնշում գործադրել Եվրոպական երկրների վրա (որոնք Ռուսաստանում նման տիպի հրթիռների առկայությունից ամենից շատն են վտանգվելու), որպեսզի վերջիններս դիմադրեն ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղադրմանը եւ ԵՄ շրջանակներում ճնշումներ իրագործեն Լեհաստանի ու Չեխիայի վրա: Ինչպես հայտնի է, վերջիններիս կառավարություններն արդեն ստորագրել են ԱՄՆ-ի հետ համապատասխան երկկողմանի համաձայնագրերը (բնորոշ է, որ զարգացումներն այդ հարթությունում ընթանում են ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս, քանի որ ԱՄՆ ազդեցությունն այդ կազմակերպությունում նվազելու միտում է ցուցաբերում):



**ՌՈՒՍԱՍՏԱՆ – ՂԱԶԱԽՍՏԱՆ.  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԳՐՈՒՄԻ  
ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

*Սույն թվականի մարտի 30-ին տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության կառավարության ղեկավար Սիխայիլ Ֆրադկովի այցը Ղազախստան, որի շրջանակներում երկու պետությունների միջև էներգետիկ համագործակցության մի շարք պայմանավորվածություններ ձեռք բերվեցին: Դրանք հիմնականում առնչվում էին Ռուսաստանի տարածքով ղազախստանյան նավթի արտահանման հիմնախնդրին:*

Ռուս-ղազախական բանակցությունների արդյունքում ստորագրված հիմնական փաստաթուղթը ղազախական նավթն Աթիրաու–Սամարա նավթատարով արտահանելու կարգի մասին արձանագրությունն էր: Ենթադրվում է, որ վերը նշված նավթատարով մոտակա 5 տարիների ընթացքում տարեկան 15 միլիոն տոննա նավթ է արտահանվելու:

Չնայած ռուսական լրատվամիջոցները Ռուսաստանի եւ Ղազախստանի վարչապետերի կողմից ստորագրված արձանագրությունը Ռուսաստանի շահերի տեսանկյունից հիմնականում դրական գնահատականներով ներկայացրին, այնուամենայնիվ, ռուս-ղազախական վերջին պայմանավորվածություններն ուղղակիորեն հարվածում են Ռուսաստանի երկարաժամկետ շահերին:

Բանն այն է, որ ռուս-ղազախական արձանագրությունը, փաստորեն, չեղյալ հայտարարեց մեկ այլ փաստաթուղթ, որն ստորագրվել էր Ռուսաստանի եւ Ղազախստանի կառավարությունների ղեկավարների կողմից հինգ տարի առաջ՝ 2002-ին. այս համաձայնագիրը, որն ուներ «Աթիրաու–Սամարա նավթատարի միջոցով ղազախստանյան նավթի արտահանման մասին» անվանումը, պարտավորեցնում էր Աստանային 15 տարիների ընթացքում, այսինքն՝ մինչեւ 2017 թվականը, այս նավթատարով տարեկան առնվազն 15 մլն տոննա նավթ արտահանել: Սույն թվականի մարտի 30-ին ստորագրված արձանագրությունը, փաստորեն, ղազախական պարտավորվածությունները Ռուսաստանի առջև կրճատում է մինչեւ 2012 թվականը՝ հետագայում հնարավորություն տալով Աստանային ավելի ազատ գործել սեփական նավթի արտահանման բնագավառում:

Որքան էլ տարօրինակ է, չնայած վերջին տարիներին Ռուսաստան–Ղազախստան միջպետական ռազմավարական նշանակության հարաբերությունների զարգացմանը, այդ նույն տարիներին նկատվում է Ռուսաստանի դիրքերի թուլացում Ղազախստանի էներգետիկ եւ նավթի արտահանման ոլորտներում: Բերենք մի քանի փաստ.

❖ 2005-ին ռուսական «Տրանսնեֆտ» ընկերության ներկայացրած՝ ընկերության զարգացման հեռանկարների մասին փաստաթղթում նշված էր, որ «Տրանսնեֆտն» առաջիկա երկու տարիների ընթացքում Աթիրաու–Սամարա նավթատարի միջոցով տարեկան արտահանվող նավթի քանակը կհասցնի 25 միլիոն տոննայի: Ռուս-ղազախական վերջին պայմանավորվածությունները ցույց են տալիս, որ ռուսաստանյան հաշվարկները չեն արդարանում:

❖ 2006-ին նույն «Տրանսնեֆտը» 2005-ի համեմատ մոտ 1 միլիոն տոննա նավթ պակաս արտահանեց Ղազախստանից, չնայած այս երկրում նավթի արտահանումն այդ մեկ տարվա ընթացքում աճել էր ավելի քան 1,7 միլիոն տոննայով:

2004-ին ռուսական երկաթուղով Ղազախստանից արտահանվել է 3,51 միլիոն տոննա նավթ, 2006-ին այս ցուցանիշը կազմել է ընդամենը 670 հազար տոննա: Ղազախական կողմն արտահանման այս անկումը բացատրում է ռուսական երկաթուղու թանկ սակագներով եւ, որպես համապատասխան փաստարկ, նշում է, որ Ղազախական Աքթաուից Նովոռոսիյսկ 1 տոննա նավթի տեղափոխումն արժե \$39.99, իսկ Աքթաու–Բաքու–Բաթում ճանապարհով՝ \$39.86: 1 միլիոն տոննայի կտրվածքով տարբերությունը կազմում է ընդամենը \$130 հազար, սակայն Բաթումում լոգիստիկ եւ կազմակերպչական թերացումներն ավելի քիչ են, քան Նովոռոսիյսկում: Այստեղ հարկ է նշել, որ թուրքական կառավարությունը, ըստ որոշ ռուսական աղբյուրների, Բաթումից դուրս եկած նավթային լցանավերին Բոսֆոր եւ Դարդանեյ նեղուցներով արագ անցնելու ավելի լավ պայմաններ է ապահովում, քան ռուսական Նովոռոսիյսկից դուրս եկած նավերին:

Կարելոր հանգամանք է այն, որ Ռուսաստանի տարածքով նավթի արտահանման նվազմանը զուգահեռ՝ Ղազախստանի համար վերջին տարիներին առաջացել են նավթի արտահանման նոր այլընտրանքային ճանապարհներ: Դրանցից ամենակարեւորներն են.

1. Ղազախստանից դեպի Չինաստան Աթաու–Ալաշանկոու նավթատարը (հանձնվել է օգտագործման 2005-ի վերջին):

2. Իրանի Նեքա-Ռեյ նավթատարը, որն Իրանի հյուսիսի կարիքներն ապահովելու համար ստանում է ղազախստանյան նավթ, իսկ Ղազախստանին համապատասխան քանակի նավթ է փոխհատուցում Պարսից ծոցից, որն Աստանան վաճառում է Արեւմուտքին եւ Չինաստանին (հանձնվել է օգտագործման 2005-ի վերջին):

3. Բաքու-Ջեյհանը, որի միջոցով հաջորդ տարի Ղազախստանը կարտահանի, ըստ նախագահ Ն.Նազարբաեւի, առնվազն 5 միլիոն տոննա նավթ:

Ռուս-բելառուսական հարաբերությունների բարդացումը եւ Բելառուսի տարածքով անցնող «Դրուժբա» նավթատարի օգտագործումից առաջիկա տարիներին հրաժարվելու Մոսկվայի որոշումը, որի փոխարեն ռուսական եւ դրան խառնված ղազախստանյան նավթը կուղղվի դեպի Բալթիկ ծովի նավահանգիստներ, կբարձրացնեն Ռուսաստանի տարածքով արտահանվող նավթի ինքնարժեքը եւ դրանով իսկ կմեծացնեն ոչռուսական նավթատարների տնտեսական գրավչությունն Աստանայի համար:

Այս բոլորի համատեքստում բավական կարելուր պետք է համարել սեփական տարածքի՝ որպես ղազախստանյան նավթի արտահանման հիմնական ճանապարհի, պահպանմանն ուղղված ռուսական կողմի քայլերը: Նման քայլ կարելի է համարել Ղազախստանի համար ռուսական երկաթուղու տրանսպորտային սակագների նվազեցման մասին որոշումը: Սա, իհարկե, միայն մասամբ կարող է լուծել Մոսկվայի առջեւ կանգնած խնդիրը:

Չիմնախնդրի գլոբալ եւ բազմակողմանի լուծման առումով Մոսկվան վերջին ամիսներին սկսել է իրականացնել բավական նուրբ քաղաքական եւ տնտեսական գիծ, որը կարող է տարածաշրջանում նոր խոշոր էներգետիկ նախագծի առաջացման հանգեցնել:

\* \* \*

Ռուսաստանի տարածքով անցնող Կասպյան նավթատարային կոնսորցիումի (ԿՆԿ) նավթատարի բաժնետոմսերի մեծ մասը գտնվում է ռուսական կառավարության վերահսկողությունից դուրս: Ռուսաստանի կառավարությանն է պատկանում այս նավթատարային կոնսորցիումի ընդամենը 24%-ը, ինչն այս խողովակաշարը դարձնում է, փաստորեն, Ռուսաստանի տարածքով անցնող միակ մագիստրալային նավթատարը, որը չի վերահսկվում ռուսական պետական էներգետիկ հսկայի՝ «Տրանսնեֆտի» կողմից: ԿՆԿ նավթատարը, որը ղազախական Աքթաուն

միացնում է ռուսական Նովոռոսիյսկի հետ, տարեկան 30 միլիոն տոննա ղազախական նավթ է տեղափոխում Ռուսաստանի սեւծովյան ափ, որտեղից էլ նավթն այնուհետեւ արտահանվում է թուրքական նեղուցների միջոցով: Նավթատարի հզորությունն ընդամենը 32 միլիոն տոննա է, մինչդեռ 2010-ին նավթի արտահանումը Ղազախստանից կկազմի մոտավորապես 70 միլիոն տոննա: Այս փաստը հաշվի առնելով՝ ԿԵԿ բաժնետերերը վերջին տարիներին սկսել են ակտիվորեն քննարկել նավթատարի հզորության ավելացման հարցը:

2006-ի սեպտեմբերի 27-28-ին, Մոսկվայում, ԿԵԿ բաժնետերերի ժողովն ընդունեց որոշում նավթատարի հզորությունը մինչեւ 67 միլիոն տոննայի հասցնելու ծրագրի նախապատրաստական եւ նախագծային աշխատանքներ սկսելու մասին: Այս որոշմանը դեմ արտահայտվեց Ռուսաստանի կառավարությունը, ինչի հետեւանքով.

1. Հոկտեմբերին ՌԴ Դաշնային հարկային ծառայությունը սկսեց կոնսորցիումի գործունեության լայնածավալ ստուգումներ:

2. Նոյեմբերին ՌԴ Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կոլեգիան մերժեց նավթատարի հզորացման ծրագիրը եւ կողմ արտահայտվեց նավթատարի օգտագործման սակագների մինչեւ 40% բարձրացմանը:

Նավթատարի հզորացման նախագծին Ռուսաստանի ընդդիմանալը բացատրվում է նրանով, որ Մոսկվան համաձայն չէ իրականացնել այդ հզորացումն առանց կոնսորցիումի բաժնետիրական մասնաբաժինների վերանայման՝ հօգուտ ՌԴ կառավարության, քանզի հենց Ռուսաստանի տարածքով է անցնում նավթատարը եւ ռուսական Նովոռոսիյսկում են բարձրվում այդ նավթատարով ստացված եւ հումքով բեռնված լցանավերը: Սրան հակառակվում են մյուս բաժնետերերը, որոնք կոնսորցիումի ստեղծման նպատակներից մեկը ժամանակին դիտել են հենց ռուսաստանյան տարանցման մենաշնորհից ազատվելու անհրաժեշտությունը:

Սակայն վերջին ամիսների ընթացքում ռուսական դիրքորոշումն այս հարցի շուրջ նշանակալիորեն փոխվել է: Մոսկվան համաձայնել է առավել «մանրակրկիտ քննարկել նավթատարի հզորացման հարցը»: Դիրքորոշման այսպիսի փոփոխության պատճառ, հավանաբար, պետք է դիտարկել Բուրգաս–Ալեքսանդրոպոլիս նավթատարի կառուցման հարցի շուրջ ձեռք բերված՝ սկզբում միայն պայմանավորվածությունները, իսկ ապա նաեւ՝ նավթատարի կառուցման մասին 2007-ի մարտին կնքված համաձայնագիրը:

Տարեկան 50 միլիոն տոննա տարանցման հնարավորություն ունեցող այս նավթատարի կառուցումը կարելու է նշանակություն ունի Ռուսաստանի համար, քանզի Մոսկվային զգալիորեն կազատի Անկարայի «Նեդուցային» քաղաքականությունից: Միեւնույն ժամանակ, այս նոր նավթատարը հատուկ կարելու է կարելու է կուլանա Ռուսաստանի տարանցման քաղաքականության վրա, կմեծացնի Նովոռոսիյսկ նավահանգստից օգտվող կողմերի՝ իրենց նավթը ռուսական ճանապարհով արտահանելու տնտեսական շահագրգռվածությունը:

Ռուսաստանի էներգետիկայի եւ արդյունաբերության փոխնախարար Վ.Խրիստենկոյի հայտարարությունն այն մասին, որ Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթատարից կարող են օգտվել նաեւ ԿՆԿ նավթատարի բաժնետերերը, մատնանշում է, որ Ռուսաստանը ցանկանում է մեկ էներգետիկ եւ տնտեսական նախագծի մեջ ներառել Բուրգաս-Ալեքսանդրոպոլիսն ու ԿՆԿ նավթատարը: Իսկ վերջինիս հզորության մեծացումը, այս տեսակետից, շահավետ է Ռուսաստանի համար, քանզի դրա արդյունքում ավելի շատ ղազախստանյան նավթ կարող է ուղղվել դեպի Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս: Մանավանդ որ արդեն իսկ շրջանառության մեջ են այս նավթատարի հզորությունը 70 միլիոն տոննայի հասցնելու նախագծերը: Այս ամենը պետք է հիմք ստեղծի Ղազախստանի հետ ՌԴ էներգետիկ կապերի ամրապնդման համար, ինչը կանդրադառնա, իհարկե, Աստանայի տարածաշրջանային քաղաքականության վրա:

Նշենք, որ մարտի 29-ին Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը Լեհաստանի նախագահ Լ.Կաչինսկու հետ հանդիպման ավարտից հետո արեց մի հայտարարություն, որը կարծես թե զրկում է Լեհաստանին եւ Ուկրաինային Ղազախստանի հետ Ռուսաստանից անկախ էներգետիկ համագործակցություն հաստատելու հույսից: «Օդեսա-Բրոդի-Գդանսկ նավթատարի կառուցումն անհնար է առանց Ռուսաստանի մասնակցության», - հայտարարեց Ղազախստանի նախագահը: Այս հայտարարությունը բավական կարելու է ճշգրտումներ մտցրեց Եվրասիայի էներգետիկ հոսքերի քարտեզի ձեւափոխման հեռանկարներում:

## **«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ» ՆԱԽԱԳԾԻ ՇՈՒՐՋ Դավիթ Հովհաննիսյան**

Մի շարք սեւծովյան պետությունների ՆԱՏՕ-ի մեջ ընդգրկումով ամբողջովին փոխվեց այս տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը: Սեւ ծովի ավազանի վրա հսկողության հաստատումը ամերիկյան ռազմավարության կարեւորագույն ծրագրերից մեկն է, քանի որ եվրաստլանտյան, այսինքն՝ հիմնականում ամերիկյան ներկայությունն այստեղ, որը միաժամանակ համապատասխանում է եվրոպական երկրների շահերին, թույլ է տալիս անցնել, այսպես կոչված, «Երեք ծովերի համակարգ» (Միջերկրական, Սեւ եւ Կասպից) նախագծի իրականացման հաջորդ փուլին: Երկրորդ փուլի բովանդակությունն ուղղակիորեն կախված է առաջին փուլի խնդրի՝ ռազմաքաղաքական գերակայության ապահովման հաջող իրականացումից եւ որպես նպատակ ունի երեք ծովերն իրար հետ միացնող ենթակառուցվածքներ ստեղծելը: Ենթակառուցվածքների տեսակների մեջ առաջնությունը, բնականաբար, տրվում է նավթամուղային, գազամուղային եւ էներգետիկ տիպին պատկանող տրանսպորտային այլ համակարգերին, որոնց հիմնական նպատակն է ապահովել Կասպիական ավազանի երկրների ածխաջրածնային վառելանյութի պաշարների տեղափոխումը եվրոպական պետություններ:

Անշուշտ, ծրագրի հիմնական նպատակն այն է, որ Միացյալ Նահանգների դաշնակից Եվրամիության մեջ մտնող պետություններն այս ենթակառուցվածքների շնորհիվ կարողանան ապահովել իրենց տնտեսությունների դինամիկ զարգացումը, ինչը թույլ կտա որոշ չափով խուսափել ռուսական էներգետիկ գործոնի ազդեցությունից:

Մյուս կողմից, էներգակիրների հոսքերն ուղղելով դեպի Եվրոպա՝ հնարավորություն է ստեղծվում սահմանափակել Չինաստանին դրանց մատակարարման ծավալները, ինչը կարող է հետագայում շատ բարդ խնդիրներ ստեղծել այս պետության արագ զարգացող տնտեսության համար, որը դեռեւս բավականաչափ չի մոդեռնացվել, ուստի հիմնականում շատ էներգատար է: Հիշեցնենք, որ Չինաստանի միայն նավթի պահանջը տարեկան աճում է մոտավորապես 20%-ով:

Հարկ է ավելացնել, որ «Երեք ծովերի համակարգ» նախագիծը նոր իմաստ է հաղորդում ՆԱՏՕ-ին՝ այս կազմակերպությունը ստանձնում է

նախատեսված ենթակառուցվածքների անվտանգ եւ անխափան աշխատանքի հիմնական պարտավորությունը, ինչը չափազանց տրամաբանական է դարձնում ՆԱՏՕ-ի ընդլայնման ծրագրերը:

Սակայն այս գլոբալ նախագծի իրականացման հարթության մեջ դեռեւս կան լուրջ հիմնահարցեր: Վաշինգտոնի գլոբալ աշխարհաքաղաքական նախագծերին բնորոշ միտումների տեսակետից դրանք կապված են, նախեւառաջ, ՍԵԼ եւ Կասպից ծովերի ավազաններում Միացյալ Նահանգների (եւ ոչ թե ՆԱՏՕ-ի) միանձնյա ռազմաքաղաքական տիրապետության ապահովման հետ:

Սառը պատերազմի ժամանակաշրջանում ՍԵԼ ծովը հանդիսանում էր խորհրդային գերիշխանության գոտի, որը, սակայն, ավարտվում էր սելժովյան նեղուցների մոտակայքում, այսինքն՝ այնտեղ, որտեղ սկսվում էր ՆԱՏՕ-ի անդամ թուրքիայի ծովային տարածքը: Սակայն խորհրդային Միության եւ նրա դաշնակից երկրների ռազմածովային առավելությունն այստեղ ակնհայտ էր, ինչն էլ ապահովում էր Տնտեսական փոխօգնության խորհրդի քաղաքական եւ տնտեսական շահերը: Ներկայումս Ռուսիայի եւ Բուլղարիայի՝ ՆԱՏՕ-ին անդամության եւ արդեն 2009թ. սպասվող Ուկրաինայի եւ Վրաստանի՝ այդ կազմակերպության անդամ դառնալու շատ իրական հնարավորության պայմաններում Ռուսաստանը զգալիորեն կորցրել է այս տարածաշրջանում իր ազդեցության լծակները:

ՍԵԼ ծովում տեղակայված ՌԴ ռազմածովային ուժերն իրենց ռազմական պոտենցիալով չորս անգամ զիջում են Թուրքիայի ռազմածովային ուժերին (ՌԴ Սելժովյան նավատորմ՝ մոտ 18 հազար զինծառայող, 46 ռազմական նավ՝ ներառյալ 8 սուզանավ, թուրքական նավատորմ՝ 60 հազար զինծառայող, 121 ռազմական նավ՝ ներառյալ 29 սուզանավ): Հարկ է ավելացնել, որ Ռուսաստանը դեռեւս չի կարողացել ստեղծել Սեւաստոպոլի ռազմական խարիսխը փոխարինող այլընտրանքային տարբերակ: Բացի այդ, այս պետության հսկողության տակ է գտնվում ծովեզրի աննշան մասը:

Սակայն ամենահզոր սելժովյան ռազմական տերություն Թուրքիան նույնպես լուրջ հիմնախնդիրների առջեւ է կանգնած: Առաջին հայացքից կարող է թվալ, թե հատկապես այս տարածաշրջանում Անկարան որեւէ խնդիր չունի. ՍԵԼ ծովը դարձել է ՆԱՏՕ-ի գրեթե ճնշող ազդեցության գոտի, որում Թուրքիայի դերը շատ մեծ է<sup>1</sup>:

Արդեն իսկ աշխատում է «Բլյու ստրիմ» գազամուղը, որը ՍԵԼ ծովի հատակով ռուսական գազահորերը կապում է Թուրքիայի հետ եւ ապահովում օրական առնվազն 27 մլն խմ գազ: Սակայն վերջերս, երբ

Իրանը նվազեցրեց Թուրքիային մատակարարվող գազի ծավալները, գազամուղի հնարավորությունները թույլ տվեցին ավելացնել ռուսական գազի մատակարարման ծավալները օրական մինչև 34 մլն խմ, ինչը թույլ տվեց փակել առաջացած պակասը եւ շարունակել էլեկտրական էներգիայի անխափան մատակարարումը:

Բացի այդ, բոլորովին վերջերս Ռուսիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Սլովենիայի եւ Իտալիայի ներկայացուցիչները Եվրամիության էներգետիկ հարցերով լիազոր Անդրիս Պիլբերգի մասնակցությամբ ստորագրեցին պայմանագիր, ըստ որի՝ նախատեսվում է այս պետությունների տարածքներով անցնող նավթամուղի կառուցում ռուսական կոնստանցա նավահանգստից մինչև իտալական Տրիեստ: Այս նախագիծը ներկայացնում է Եվրամիության էներգետիկ ռազմավարության իրականացման հերթական փուլը, որի նպատակն է՝ կրճատել եվրոպական տնտեսության կախյալությունը ռուսական էներգակիրների մատակարարումներից: Նավթը լցանավերով կոնստանցա բերվելու է թուրքական Ջեյհան նավահանգստից, որը, ինչպես հայտնի է, Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթամուղի վերջին կետն է: Այսպիսով, Թուրքիայի դերը որպես կարեւոր տարանցման պետություն, էլ ավելի աճելու է:

Ռուսաստանը փորձում է համարժեք պատասխաններ գտնել՝ զարգացնելով իրեն պատկանող կամ իր ազդեցության տակ գտնվող ենթակառուցվածքների ստեղծման ծրագրեր: 2007թ. փետրվարի 7-ին Ռուսաստանի, Չինաստանի եւ Բուլղարիայի ներկայացուցիչները ստորագրել են Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղի կառուցման մասին պայմանագիրը, որը հնարավորություն կտա ռուսական նավթը սեւծովյան բուլղարական Բուրգաս նավահանգստից տեղափոխել Էգեյան ծովի ափին գտնվող հունական Ալեքսանդրոպոլիս նավահանգիստ, ինչը թույլ կտա մատակարարել Հարավային Եվրոպայի երկրներին ռուսական նավթը՝ շրջանցելով նեղուցները:

Սույն թվի մարտ ամսին Աստանայում, Բաքվում, Աջգաբադում, Թբիլիսիում տեղի ունեցան տարբեր փակ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել է կասպիական էներգետիկ միջանցքի ծրագիրը, որի հիմնական նպատակն է՝ միացնել միջինասիական խողովակաշարերն ադրբեջանականի հետ եւ Վրաստանի վրայով կասպիական նավթն ու գազը տեղափոխել Թուրքիա եւ այնտեղից՝ Եվրոպա:

Սակայն թուրք-ամերիկյան գնալով ավելի սուր բնույթ ստացող հակասությունները հարցականի տակ են դնում այս վաղուց արդեն քննարկվող նախագծի իրականացումը նկարագրված եղանակով: Հակասություններն իրականում շատ լուրջ են եւ կապված են տարբեր



հիմնախնդիրների հետ՝ քրդական հարց եւ Թուրքիայի՝ իրաքյան Քուրդիստանում հատուկ դերակատարություն ունենալու հավակնությունները, Անկարայի ընդդիմանալը Միացյալ Նահանգների՝ Սեւ ծովում ռազմական ներկայություն ունենալու մտադրությանը, ռուս-թուրքական հարաբերությունների նկատելի ջերմացումը (ընդհուպ մինչեւ համատեղ ռազմածովային զինավարժություններ Սեւ ծովում), թուրքական խուսափողական քաղաքականությունն Իրանի հարցում, հայ-թուրքական փակ սահմանը. մի խոսքով, Անկարայի բոլոր այն ծրագրերը, որոնք ընդգծում են ինքնուրույն եւ Միացյալ Նահանգներից առանձին քաղաքականություն վարելու վերջինիս ձգտումը, ինչն օբյեկտիվորեն հակասում է ամերիկյան շահերին, առաջացնում է Վաշինգտոնի անվստահությունն իր դաշնակցի նկատմամբ եւ ստիպում փոխել արդեն իսկ կայացրած որոշումները:

Սա է պատճառը, որ Միացյալ Նահանգները վերջերս առաջ են քաշել երկու նոր ծրագիր:

Առաջինը միտված է Սեւ ծովում ամերիկյան ռազմածովային խարիսխ տեղադրելու համար այլ գործընկեր որոնելուն: Ինչպես հայտնի է դառնում սեղմ պաշտոնական հաղորդագրություններից, այս հարցի վերաբերյալ բանակցություններ են ընթանում ոչ միայն սեւծովյան ՆԱՏՕ-ի անդամ երկրների, այլ նաեւ Վրաստանի հետ:

Երկրորդ ծրագիրը էներգետիկ բնույթ ունի եւ նախատեսում է նոր խողովակաշար (դեռեւս հստակ չէ անվանումը՝ GUEU, թե՞ GREU. դա պարզ կլինի, երբ հստակեցվի այն հարցը, թե որ երկրի վրայով է Վրաստանից ածխաջրածնային հումքը հասցվելու Եվրամիություն՝ Ռումինիայի՞, թե՞ Ուկրաինայի: Համաձայն վերջին տվյալների, ամենայն հավանականությամբ, որպես հաջորդ տարանցման երկիր կընտրվի Ռումինիան):

Այս ծրագրի հրապարակումն առաջացրել է Անկարայի դժգոհությունը, քանի որ հարցականի տակ է դնում NABUCCO անվամբ հայտնի հսկայական գազամուղի իրականացումը (այս գազամուղը միջինասիական եւ ադրբեջանական գազը Թուրքիայի վրայով պետք է տեղափոխի Եվրամիության երկրներ): Ի պատասխան այս սպառնալիքի՝ Թուրքիան նորից վերակենդանացրեց «Բլյու ստրիմի» շահագործման հանձնման արարողության ժամանակ բարձրաձայնած այն գաղափարը, որ այս գազամուղը կարող է շարունակվել Միջերկրականի հատակով մինչեւ Հունաստան եւ Իտալիա, իսկ սեւծովյան խողովակաշարից մի ճյուղավորում կարող է գազ մատակարարել Բուլղարիային եւ վերջինիս հարեւանությամբ գտնվող մյուս երկրներին: Այս գաղափարն արագ

արձագանք է գտել Հունգարիայում, որը նույնպես ձգտում է դիվերսիֆիկացնել իր էներգակիրների մատակարարման աղբյուրները:

Կարելի է նկատել, որ շուկա նետվող այս անվերջ ծրագրերի մրցակցությունն ինչպիսի լուրջ շահերի դրսեւորում է, եւ նման ծրագրերի իրականացման համար որքան խոչընդոտներ է պետք հաղթահարել:

Սակայն մի բան արդեն հստակ է՝ «Երեք ծովերի համակարգ» գերնախագիծն աստիճանաբար միս ու արյուն է ստանում: Սեւ ծովում Միացյալ Նահանգների հաստատվելուց հետո կանխատեսելի է տարածաշրջանի քաղաքական քարտեզի հետագա փոփոխությունը, որն այս կամ այն չափով կփոխի ուժերի հարաբերակցությունը երկրագնդի այս մասում, կնվազեցնի տարածաշրջանային տերությունների դերը եւ, վերջապես, անմիջականորեն կազդի Հայաստանի Հանրապետության արտաքին եւ ներքին իրավիճակի վրա:

---

<sup>1</sup> Փորձագետները նշում են, որ վերջին տարիներին թուրքական կառավարությունը հետեւողականորեն խստացնում է սեւծովյան նեղուցներով լցանավերի անցման կանոնները: 200 մետրից ավելի երկայնք ունեցող նավերը կարող են անցնել միայն ցերեկը, ընդ որում, այդ տիպի նավերի համար իրականացվում է միայն միակողմանի շարժում: Ծովային երթեւեկությունը մեծ թվով նավերի կուտակման պատճառով դարձել է վտանգավոր: Այս ամենի հետեւանքով տրանսպորտային ընկերությունները մեծ կորուստներ են կրում, որոնց հետեւանքով բեռների տեղափոխման գներն աճում են, ինչն, իր հերթին, ազդում է ռուսական սեւծովյան նավահանգիստներ Նովոռոսիյսկի եւ Տուապսեի արդյունավետության վրա: Դրանց գործունեությունը ստիպված սահմանափակվում է Սեւ ծովի ակվատորիայով:

## **ԻՐԱՔԻՑ ԱՄԵՐԻԿԱՆ ՌԱԶՄՈՒԺԻ ԴՈՒՐՍԲԵՐՍԱՆ ՅԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

### ***Սարգիս Չարությունյան***

Թեև մարտի 29-ին Պենտագոնը հայտարարեց Պարսից ծոցի շրջան «Nimitz» ավիակրի գլխավորությամբ ռազմանավերի նոր խումբ ուղարկելու մասին՝ տարածաշրջանում ամերիկյան ավիակիր խմբերի թիվը հասցնելով երեքի, իսկ ապրիլի 6-ին ամերիկյան «NBC» հեռուստաալիքը հաղորդեց Իրաք լրացուցիչ 12 հազար զորք ուղարկելու Բուշ-կրտսերի վարչակազմի ծրագրերի վերաբերյալ, սակայն հիմքեր կան պնդելու, թե Վաշինգտոնում քաղաքական որոշում է կայացվել Իրաքից ամերիկյան զորքերի մոտալուտ դուրսբերման մասին:

Չավանական է, որ այդ որոշումը կայացվել է դեռևս 2006թ. նոյեմբերի 7-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած Կոնգրեսի միջանկյալ ընտրություններից առաջ: Ընտրությունների հաջորդ օրը Վաշինգտոնում իրաքյան կամպանիայի պատասխանատու, ԱՄՆ պաշտպանության այն ժամանակվա նախարար Դոնալդ Ռամսֆելդի պաշտոնանկությունը պետք է գնահատել ոչ այնքան ներքաղաքական տեղաշարժի արդյունք (մինչև 2006թ. նոյեմբերի 7-ի ընտրությունները Ռամսֆելդի պաշտոնանկությունը կնշանակեր իրաքյան կամպանիայի ծախողման հրապարակային ընդունում, ինչն էլ ավելի կբարդացներ հանրապետականների վիճակն ընտրություններում, բացի այդ, նոյեմբերի 7-ից առաջ արդեն իսկ, ընդհանուր առմամբ, հայտնի էին ընտրությունների արդյունքները), որքան ԱՄՆ իրաքյան ռազմավարության մեջ տեղի ունեցող փոփոխության ցուցիչ: Պատահական չէ, որ 2006թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից ի վեր ամերիկյան տեղեկատվական հոսքերում աստիճանաբար ավելի մեծ տեղ է հատկացվում Իրաքից Միացյալ Նահանգների զորքերի դուրսբերման հարցին<sup>1</sup>:

Միակ կետը, որ միգուցե շարունակում է անորոշ մնալ, Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման վերջնաժամկետի հարցն է:

Իրաքում տեղակայված ԱՄՆ զինուժի կորուստները շարունակվում են, եւ այդ առումով Պենտագոնը չի կարողանում լուծել իր առջև դրված խնդիրը: Յետեւաբար, զուտ ռազմական տեսանկյունից՝ Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերումը կարող է հիմնավորվել ցանկացած ժամանակ:

Միացյալ Նահանգների ներքին քաղաքականության առումով իրավիճակն ավելի որոշակի է: 2008թ. նախագահական ընտրություններին դեմոկրատների հաղթելու շանսերն անհամեմատ ավելի բարձր են, այսինքն՝ 2009 թվականը Վաշինգտոնում, ամենայն հավանականությամբ, ամրագրված է որպես գորքերի դուրսբերման վերջնաժամկետ: Ինտրիգային միակ կետը կարող է լինել 2008թ. Իրաքից գորքերի դուրսբերման հավանականությունը: Քանի որ 2008թ. կայանալու են նաև Կոնգրեսի հերթական ընտրությունները, ապա հանրապետականներն առնվազն փորձելու են 2009թ. մուտք գործել հնարավորինս քիչ կորուստներով, եւ չի բացառվում, որ Բուշ-կրտսերի վարչակազմն արդեն 2008թ. սկսի Իրաքից ամերիկյան գորքերի դուրսբերման գործընթացը:

Հարցը կախված է նաև մերձավորարեւելյան զարգացումներից: Ներկայումս ամերիկյան դիվանագիտության հիմնական նպատակն է 2008-2009թթ. համար ստեղծել այնպիսի իրավիճակ, որ Իրաքից ամերիկյան գորքերի դուրսբերման որոշման վրա մերձավորարեւելյան գործոններն ունենան առավելագույնս սահմանափակ ազդեցություն:

\* \* \*

Անցած մի քանի շաբաթների ընթացքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ոչ միայն թույլ են տալիս խոսել Իրաքից ամերիկյան գորքերի առաջիկա դուրսբերման մասին, այլև այդ առումով պետք է ընկալվեն որպես ցուցիչներ:

Առաջնային ցուցիչը բրիտանական քաղաքականության մեջ նկատված փոփոխությունն է: Դեռևս Բեյքեր-Չամիլթոն խմբի ծավալած գործունեության շրջանից Թոնի Բլերի կառավարությունն առանձնացավ Իրաքում ԱՄՆ ու նրա դաշնակիցների վարած քաղաքականության վերանայման հարցում: Այդ իմաստով անսպասելի չէր 2007թ. փետրվարի 21-ին բրիտանական վարչապետի հայտարարությունը, թե Լոնդոնը ձեռնամուխ է լինում Իրաքում տեղակայված իր ռազմափաստիճանական դուրսբերմանը՝ արդեն 2007թ. ընթացքում Իրաքի հարավում գործող բրիտանական 7100-ոց զորախումբը կրճատելով 1600 հոգով:

Իրաքյան խնդրում բրիտանական քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունը հատկապես ակնառու դարձավ մարտի 23-ին իրանցիների կողմից ձերբակալված բրիտանացի 15 նավաստիների շուրջ ծավալված զարգացումներում: Թեև ապրիլի 4-ին Թեհրանն ազատ արձակեց նավաստիներին, սակայն ճգնաժամից իրանական կողմը դուրս եկավ առավելապես շահած կարգավիճակով:

❖ տեղեկատվական հարթությունում թեհրանն առավելություն ձեռք բերեց, քանի որ Իրանի միջուկային ծրագրի շուրջ առկա միջազգային լարվածության ֆոնին իրանական կողմի *ճախածեռնած* ակցիայի նման՝ խաղաղ ու բրիտանական կողմի համար ավելի զիջողական ավարտը մի զգալի մասով արժեզրկեց ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից Իրանի դեմ ծավալված տեղեկատվական-հոգեբանական կամպանիան,

❖ իրանական կողմն ունեցավ կոնկրետ ձեռքբերում. չնայած մարտի 31-ին ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչ Շոն ՄըքՔորմակը հայտարարեց, թե Վաշինգտոնը չի ծրագրում 15 բրիտանացիներին փոխանակել 2007թ. հունվարի 11-ին ու փետրվարի 4-ին հյուսիսիրաքյան էրբիլ քաղաքում ու Բաղդադում ձերբակալված իրանցի 6 դիվանագետների հետ, սակայն ապրիլի 3-ին Իրաքում ազատ արձակվեց դեռևս փետրվարի 4-ին Բաղդադում ձերբակալված Իրանի դեսպանատան երկրորդ քարտուղար Ջալալ Շարաֆին. չի բացառվում, որ Շարաֆիի ազատ արձակումը հնարավոր է եղել Վաշինգտոնի նկատմամբ Լոնդոնի գործադրած ճնշման արդյունքում,

❖ բրիտանացի 15 նավաստիների հետ կապված ամերիկա-բրիտանական հակասությունների մասին է վկայում մասնավորապես ապրիլի 3-ին Լոնդոնում լույս տեսնող «The Independent» օրաթերթի հրապարակումը, ըստ որի՝ իրանցիների կողմից բրիտանացի նավաստիների ձերբակալումը պատասխանն էր 2007թ. հունվարի 11-ին հյուսիսիրաքյան էրբիլ քաղաքում ամերիկյան հատուկ նշանակության ջոկատի գործողության, որի արդյունքում թեև ձերբակալվեցին իրանցի 5 դիվանագետներ, սակայն ամերիկյան ուժերի թիրախն էին Քուրդիստանի վարչակազմի հետ բանակցություններ վարելու նպատակով քաղաքում գտնվող Իրանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Սոհամադ Ջաֆարին եւ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզության ղեկավար Սինոջախար Ֆրուզանդուն. ակնհայտ է, որ նշված տեղեկությունը «The Independent»-ը կարող էր ստանալ առաջին հերթին բրիտանական հետախուզությունից,

❖ իսրայելական աղբյուրների համաձայն՝ բրիտանացի նավաստիների ազատության դիմաց Լոնդոնը պատրաստակամություն է հայտնել թեհրանին անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել 2007թ. փետրվարին Արեւմուտք փախած գեներալ Ալի Ռեզա Ասղարիի գտնվելու վայրի վերաբերյալ, ով մինչեւ 2005թ. սկիզբը 8 տարի զբաղեցրել է Իրանի պաշտպանության փոխնախարարի պաշտոնը:

Ընդհանուր հետեւությունն այն է, որ եթե ամերիկա-բրիտանական կողմը ներկայումս միտված է Իրանի նկատմամբ վարել կոշտ քաղաքականություն կամ առավել եւս ձեռնամուխ լինել ռազմական հարվածի, ապա բրիտանացի նավաստիների դեպքը շատ լավ առիթ էր, ինչի մասին բացեիքաց գրում էին, օրինակ, ռուսական ռազմական վերլուծաբանները: Մինչդեռ այդ դեպքի արդյունքներն առայժմ խոսում են ճիշտ հակառակի մասին:

Պակաս կարելուր ցուցիչ չեն Մերձավոր Արեւելքում ԱՄՆ դաշնակիցները համարվող Սաուդյան Արաբիայի ու Քուրդիստանի ղեկավարությունների դիրքորոշումներում տեղի ունեցած փոփոխությունները՝ կապված Իրաքում ամերիկյան ռազմական ներկայության հետ: 2007թ. մարտի 28-29-ը սաուդյան թագավորության մայրաքաղաք Էր-Ռիադում տեղի ունեցած Արաբական պետությունների լիգայի 19-րդ գագաթաժողովի ժամանակ Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահի իբն Աբդել-Ազիզը գագաթաժողովի հենց առաջին օրը Իրաքում ԱՄՆ ռազմական ներկայությունը բնութագրեց որպես «ոչ լեգիտիմ»:

Գագաթաժողովի ժամանակ նույն տրամաբանության հայտարարությամբ հանդես եկավ նաեւ Իրաքի նախագահ, ազգությամբ քուրդ Ջալալ Թալաբանին, ով Իրաքում կռաւիցիոն ուժերի գործողությունները որակեց որպես բռնազավթում՝ օկուպացիա:

Թե՛ սաուդյան թագավորությունը եւ թե՛ հատկապես Քուրդիստանի ղեկավարությունը գերազանցապես սատարել են ԱՄՆ մերձավորարեւելյան նախաձեռնություններին: Սաուդյան ինքնակալի ու Թալաբանիի նման հայտարարությունները խոսում են ոչ թե նրանց ինքնուրույնության աճի մասին, այլ պետք է որ վկայեն Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերման վերաբերյալ Վաշինգտոնում կայացված որոշման առնչությամբ նրանց տեղեկացվածության մասին:

Հաջորդ ուշագրավ ցուցիչն ամերիկյան ներքին քաղաքականության մեջ երեւան եկած զարգացումներն են: 2007թ. մարտի 23-ին եւ 29-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների տունն ու Սենատը հավանության արժանացրին երկու օրինագիծ. Սպիտակ տնից, համապատասխանաբար, պահանջվում էր մինչեւ 2008թ. սեպտեմբերի 1-ը եւ մինչեւ 2008թ. մարտի 31-ը Իրաքից դուրս բերել ամերիկյան զորքերը<sup>2</sup>:

Նույն տրամաբանության ներքո են ընկնում ԱՄՆ Ներկայացուցիչների տան խոսնակ, դեմոկրատ Նենսի Փելոսիի դիվանագիտական վերջին նախաձեռնությունները: Ապրիլի 3-4-ը գտնվելով Դամասկոսում՝ Փելոսին իսրայելա-պաղեստինյան, իսրայելա-սիրիական ու իրաքյան խնդիրների առնչությամբ բանակցություններ վարեց Սիրիայի նախա-

գահ Բաշար Ասադի հետ: Թեև Սպիտակ տունը, որը 2005թ. ի վեր սառեցրել է հարաբերությունները Դամասկոսի հետ՝ կապված Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Չարիրիի 2005թ. փետրվարի 14-ի սպանության հետ, հրապարակավ դժգոհություն հայտնեց Փելոսիի այցի առնչությամբ, իսկ մյուս կողմից էլ՝ Փելոսիի նախաձեռնությունը կարող է աննշան ազդեցություն ունենալ Սիրիայի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության վրա, սակայն, իրականում, ԱՄՆ Ներկայացուցիչների տան խոսնակի այցելությունը Դամասկոս վկայում է ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխության մասին: Այդ իմաստով Փելոսիի այցը չէր կարող նախօրոք համաձայնեցված չլինել Սպիտակ տան հետ:

Ներկայացվածի ֆոնին աչքի են զարնում նաև ապրիլի 5-ին գաղտնագերծված Պենտագոնի զեկույցը, որը պաշտոնապես ընդունում է, թե Սադամ Յուսեյնի կառավարության ու «Ալ-Քաիդա» կազմակերպության միջև կապ գոյություն չի ունեցել (հիշեցնենք, որ 2003թ. ԱՄՆ-ի կողմից Իրաքի դեմ ռազմական գործողություններ սկսելու առանցքային հիմնավորումներից մեկն էլ Սադամ Յուսեյնի կառավարության ու «Ալ-Քաիդայի» միջև գոյություն ունեցող ենթադրյալ համագործակցությունն էր) եւ ավելի վաղ՝ մարտի 6-ին Վաշինգտոնի դաշնային դատարանի կողմից ԱՄՆ փոխնախագահ Դիք Չեյնիի աշխատակազմի նախկին ղեկավար Լյուիս Լիբիին կեղծ վկայություն տալու համար 25 տարվա ազատազրկման դատապարտելը:

Եվ վերջապես, որպես ցուցիչ պետք է հաշվի առնել նաև սեփական միջուկային ծրագրի առնչությամբ իրանական դիրքորոշման կոշտացումը: Բրիտանացի 15 նավաստիների հետ կապված ճգնաժամի օրերին, մասնավորապես մարտի 26-ին, Իրանը պաշտոնապես հայտարարեց, թե մասնակիորեն սառեցնում է հարաբերություններն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ: Ապրիլի 3-ին Իրանի Ատոմային էներգիայի կազմակերպության փոխտնօրեն Մոհամադ Սայիդին նշեց, թե 3-4 ամսից Իրանը կհայտարարի 2 հազ. մեգավատտ հզորությամբ նոր ատոմակայանի շինարարության մրցույթ: Ապրիլի 9-ին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հայտարարեց, որ իր երկիրը մուտք է գործել միջուկային վառելիքը արդյունաբերական ծավալներով արտադրող երկրների ակումբ եւ խնդիր է դրել գործող ցենտրիֆուգների թիվն առաջիկայում հասցնել 3000-ի: Հաջորդ օրը Իրանի փոխնախագահ, Ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Գուլամռեզա Աղազադեն որպես նպատակ նշեց, թե Իրանը մտադիր է Նաթանգում տեղադրել 50.000 ցենտրիֆուգ:

Ներկայացված դրույթները հիմք են տալիս ենթադրելու, որ թեև տարածաշրջանում՝ մասնավորապես Պարսից ծոցի հատվածում, ներկայումս ընթանում է ամերիկյան ռազմական կարողությունների ընդլայնում, Վաշինգտոնն, ամենայն հավանականությամբ, Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերման վերաբերյալ քաղաքական որոշում է կայացրել, որի վերջնաժամկետի հարցը, թերևս, շարունակում է անորոշ մնալ:

---

<sup>1</sup> Այդ առումով պետք է շրջադարձային կետ համարել ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի ու նախկին կոնգրեսական Լի Յամիլթոնի գլխավորած «Iraq Study Group»-ի պատրաստած զեկույցի հրապարակումը 2006թ. դեկտեմբերի 6-ին: Ջեկույցն առաջարկում էր մինչև 2008թ. Իրաքից դուրս բերել ամերիկյան զորքերը եւ հակամարտության կարգավորման գործում ներգրավել նաև Իրանին ու Սիրիային:

<sup>2</sup> Սենատի օրինագծի առանձնահատկությունն այն է, որ Իրաքում ու Աֆղանստանում ռազմական գործողություններ վարելու համար Պենտագոնին անհրաժեշտ լրացուցիչ \$122 մլրդ-ի հատկացումը կապվեց մինչև 2008թ. մարտի 31-ը Իրաքից ամերիկյան ռազմուժի դուրսբերման պահանջի հետ:



**ԱՐԱՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ  
ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ**  
*Արաքս Փաշայան*

2007թ. մարտի 28-29-ը Սաուդյան Արաբիայի Թագավորության մայրաքաղաք Ռիադում տեղի ունեցավ արաբական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ)<sup>1</sup> XIX գագաթաժողովը՝ «Համերաշխություն» խորագրով: Բավական է նշել, որ առաջին անգամ արաբական երկրների պետությունների ղեկավարների հանդիպմանը մասնակցում էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը. մասնակցում էին եվրոպական, ասիական եւ աֆրիկյան մի շարք երկրների ներկայացուցիչներ: Ներկա էին արաբական տասնյոթ երկրների առաջին դեմքեր:

Գագաթաժողովի հիմնական նպատակներից մեկն այն էր, որպեսզի տարանջատված եւ բազմաբեւեռ արաբական աշխարհն ի վերջո փորձի համախմբվել եւ կարողանա միացյալ ուժերով դիմագրավել արաբական աշխարհին սպառնացող մարտահրավերները: Օրակարգի հիմնական հարցերը կապված էին մերձավորարեւելյան հիմնախնդիրներին՝ պաղեստինա-իսրայելական հակամարտությանը, Իրաքում եւ Լիբանանում, ինչպես նաեւ Սուդանում եւ Սոմալիում ստեղծված իրավիճակներին: Հանդիպմանն ընդունվեց ամփոփիչ կոմյունիկե եւ հռչակագիր:

Գագաթաժողովի ավարտին տված մամուլի ասուլիսի ժամանակ Սաուդ Ալ-Ֆեյսալը՝ Սաուդյան Արաբիայի արտգործնախարարը, նշեց, որ արաբ ղեկավարները պետք է պատասխանատվության զգացողություն ունենան տարածաշրջանում առկա խնդիրների նկատմամբ, պետք է փորձեն գործնական որոշումներ ընդունել, որոնք կհամապատասխանեն տարածաշրջանային եւ միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին:

Մեծ հնչեղություն ստացավ գագաթաժողովին պաղեստինա-իսրայելական հակամարտության սաուդական ծրագրի (կամ խաղաղության արաբական նախաձեռնության) գործադրման մասին որոշումը: Սույն ծրագիրն առաջին անգամ ընդունվել է 2002թ. Բեյրութի ԱՊԼ գագաթաժողովում: Ռիադի գագաթաժողովում որոշվեց հակամարտության կարգավորման հարցում առաջնորդվել հիշյալ ծրագրով՝ առանց որեւէ ուղղման, ինչը պնդում էր Թել Ավիվը:

Արաբական նախաձեռնությունը նկատի է առնում համակողմանի խաղաղության հաստատում կամ *հող` խաղաղության դիմաց* հայտնի դրույթի ընդունում, բոլոր արաբական երկրների կողմից Իսրայել պետության ճանաչում` պայմանով, որ վերջինս դուրս գա 1967թ. արաբական գրավյալ տարածքներից, իսկ պաղեստինցի փախստականների խնդրին տրվի արդար լուծում:

Արաբական երկրների առաջնորդները հայտարարեցին, որ աջակցում են Պաղեստինի ազգային միասնության կառավարությանը: Գրեթե բոլոր բանախոսներն անընդունելի համարեցին Պաղեստինի Ինքնավարության բյուջեի դեմ Արեւմուտքի պատժամիջոցները: Այս կապակցությամբ ընդունվեցին «Պաղեստինի ազգային միասնության կառավարությանն աջակցելու մասին» եւ «Պաղեստինի ազգային վարչակազմի բյուջեին եւ պաղեստինցի ժողովրդի տոկունությանն աջակցելու մասին» բանաձեւերը:

Ռիադի գագաթաժողովը դատապարտեց ԱՄՆ-ին Իրաքի օկուպացման համար` անհրաժեշտ համարելով օտար զորքերի դուրսբերումը: Լիբանանում, Սուդանում եւ Սոմալիում ստեղծված վիճակի համար մեղավոր ճանաչվեցին արտաքին ուժերը: Ինչպես միշտ, ընդունվեցին «Սիրիական արաբական Գոլանի բարձունքների գրավման մասին», «Լիբանանի հետ համերաշխության եւ նրան աջակցելու մասին», «Իրաքի իրավիճակի մասին», «Իրանի կողմից Արաբական Միացյալ Էմիրություններին պատկանող Արաբական ծոցի (Պարսից ծոցի-Ա.Փ.) երեք կղզիների` Սեծ եւ Փոքր Թոմբի եւ Աբու Սուսայի գրավման մասին» բանաձեւերը:

Կարեւոր էր գագաթաժողովում «Արաբական ազգային անվտանգության» մասին բանաձեւը: Դրանում նշված է, որ ԱՊԼ անդամ պետությունները խնդիր ունեն պահպանելու իրենց անկախությունը եւ տարածքային ամբողջականությունը եւ աջակցելու տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը: Նրանք պետք է ամրապնդեն միջպետական կապերը, իսկ իրենց միջեւ ծագող հակամարտությունները կարգավորեն խաղաղ ճանապարհով: Այսինքն` ԱՊԼ անդամ պետությունները պետք է ձգտեն արաբական ռեգիոնում պահպանել ստատուս քվոն` իր ներկա սահմաններով ու առկա վարչակարգերով: Սակայն բանաձեւում հստակ նշված չէ, թե ինչ ռեսուրսներով եւ մեխանիզմներով պետք է արաբական երկրներն իրականացնեն ռեգիոնի անվտանգությունը:

Հանդիպմանն ընդունվեց նաեւ «ԱՊԼ անդամ պետություններում ատոմային էներգիայի խաղաղ զարգացման մասին» բանաձեւը, որտեղ նշված է, որ ատոմային էներգիայի խաղաղ զարգացման ծրագիրը պետք

է հիմնված լինի միջազգային համաձայնագրերի եւ փաստաթղթերի վրա: Մի շարք դրույթներ ընդունվեցին միջարաբական տնտեսական կապերի զարգացման վերաբերյալ:

Գազաթաժողովում վերստին արձանագրվեց, որ տարածաշրջանը եւ, մասնավորապես, արաբական աշխարհն անբաղձալի վիճակում է: Ռիադի հռչակագրում նշված է. «Մեր տարածաշրջանը հայտնվել է վտանգավոր իրավիճակում. արաբական հայրենիքը ենթարկվում է բռնության, արաբական ռեսուրսները վատնվում են, սպառնալիքի տակ են արաբական ինքնությունը եւ մշակույթը...»:

Աբդալլահ թագավորը, գազաթաժողովի բացման իր խոսքում, մատնանշելով արաբական աշխարհի կնճռոտ խնդիրները, խոստովանեց, որ իրենք հայտնվել են մի իրավիճակում, որ չեն կարողանում ոչինչ անել՝ իրենց եղբայրներին օգնելու համար: Արաբական աշխարհը, ըստ նրա, մատնված է եղել անգործության, որի պատասխանատվությունն ընկած է ոչ թե Լիզայի, այլ արաբ ղեկավարների վրա, որոնք գտնվում են միմյանց հետ հակասությունների մեջ: Ըստ Աբդալլահ թագավորի՝ սխալ կլինի կարծել, թե տարածայնությունն արաբների ճակատագիրն է: Այդ իսկ պատճառով արաբական աշխարհը պետք է անի առաջին քայլը՝ վերադարձնելու հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Ռիադի գազաթաժողովն ի ցույց դրեց, որ արաբ առաջնորդները ցանկանում են իրենք իրենց ուժերով վճռել արաբական աշխարհին վերաբերող խնդիրները, ինչը, սակայն, ոչ իրատեսական է թվում՝ հաշվի առնելով հակամարտությունների կարգավորման մենաշնորհը իր ձեռքում կենտրոնացրած միաբեւեռ ուժային կենտրոնի առկայությունը: Այս տեսանկյունից հատկանշական է Սաուդյան Արաբիայի արտգործնախարար Սաուդ Ալ-Ֆեյսալի՝ «Նյուսվիթին» տված հարցազրույցը: Ըստ նրա՝ արաբական աշխարհում գործողությունները զարգանում են այնպես, կարծես թե այստեղ ժողովուրդներ չեն ապրում, որ ունենան սեփական անկախ ցանկություններ, կամ որոնք ի վիճակի լինեն պաշտպանել իրենց հետաքրքրությունները եւ իրենց տարածքները:

Միեւնույն ժամանակ հստակ է, որ Լիզայի քաղաքական ընտրանին շատ դեպքերում համաձայնեցնում է իր քաղաքականությունը Վաշինգտոնի հետ եւ չի պատրաստվում նրա հետ առճակատման գնալ: Արաբական աշխարհում ստեղծված խնդիրները, միջարաբական եւ միջդավանական հակասությունները, ըստ արաբ առաջնորդների, ունեն իրենց պատճառները, ինչը, սակայն, ինչպես կարելի է ենթադրել, այդքան էլ կապ չունի Միջին Արեւելքում ամերիկյան քաղաքականու-

թյան հետ: Ըստ արաբ առաջնորդների, առկա խնդիրների հիմնական պատճառն այն է, որ արաբական աշխարհը կորցրել է սեփական ինքնության զգացողությունը, այդ իսկ պատճառով նա պետք է փորձի վերակենդանացնել արաբական համերաշխության ոգին, վերանայի իր կողմնորոշումները, եւ որ ամենակարեւորն է՝ կարողանա որդեգրել *միասնական համաարաբական դիրքորոշում*:

Արաբական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը հայտարարեց, որ անընդունելի է համարում այն քայլերը, որոնք փորձում են կասկածի տակ դնել իրենց արժեքները, արատավորել իրենց կրոնն ու սրբատեղիները, միջդավանական հակասություններ հրահրել, որոնք քաղաքական նպատակ ունեն եւ միտված են բաժանելու ազգը:

Ռիադի գազաթափողովի մասնակիցներին ուղերձ էր հղել ՌԴ նախագահ Վ.Պուտինը, որտեղ նշված էր, որ Մերձավոր Արեւելքում ստեղծված անկայուն իրավիճակը պայմանավորված է միաբեւեռ ուժային կառավարման անարդյունավետությամբ:

Ռիադի գազաթափողովի բացմանը հանդես եկավ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ով Աբդալլահ թագավորի անձնական հյուրն էր: Հատկանշական է, որ Թուրքիայի վարչապետն առաջին անգամ էր մասնակցում արաբական բարձր մակարդակի գազաթափողովին: Վերջին շրջանում նկատվում է Թուրքիայի եւ արաբական աշխարհի մերձեցման միտում: Նախկինում արաբական/իսլամական աշխարհը բավական վերապահ մտեցում ուներ Թուրքիայի նկատմամբ՝ հաշվի առնելով օսմանյան տիրապետության պատմական հիշողությունը, ինչպես նաեւ ռազմավարական նշանակություն ունեցող կարեւոր ոլորտներում ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ Թուրքիայի համագործակցությունը:

Ռիադի գազաթափողովի ուղղվածությունը շատ դեպքերում պայմանավորված էր տարածաշրջանի հանգուցային խնդիրների նկատմամբ Սաուդյան Արաբիայի դիրքորոշմամբ: Աստիճանաբար ակնհայտ է դառնում, որ Սաուդյան Արաբիան հավակնում եւ գործնականում փորձում է հիմնավորել տարածաշրջանային կարեւոր դերակատար դառնալու իր նշանակությունը: Սաուդցիներն արդեն իրականացրել են մի շարք գործնական քայլեր: Ռիադի հանդիպման շրջանակներում Աբդալլահ թագավորին հաջողվեց, որպեսզի Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը համաձայնի ուղիղ բանակցություններ սկսել Լիբանանի վարչապետ Ֆուադ Սինիորայի հետ, ով Դամասկոսին մեղադրում է իր երկրի գործերին միջամտելու մեջ: Նշենք, որ Սաուդյան Արաբիան բավական մեծ դերակատարում ունի ներլիբանանյան զարգացումներում եւ մեծ ազդեցություն՝ սուննի շրջանակներում:

Ինչ վերաբերում է Լիգայում ընդունված որոշումներին հետեւելու արաբական երկրների քաղաքական կամքին, ապա հարկ է նշել, որ մինչեւ օրս թղթի վրա են մնացել ամենատարբեր ուլորտներում համագործակցելու վերաբերյալ Լիգայի կողմից ընդունված բազմաթիվ որոշումներ, որոնցից շատերը հիմնականում քարոզչական նշանակություն ունեն: Արաբական պետություններից շատերը բազմաթիվ անգամ խախտել են նաեւ ԱՊԼ կանոնադրության մեջ ընդունված այն դրույթը, համաձայն որի՝ անդամ պետություններն իրավունք չունեն միջամտել միմյանց ներքին գործերին: Աշխարհաքաղաքական տարբեր հետաքրքրություններ, էթնոդավանական խառը պատկեր, ինչպես նաեւ քաղաքական ու տնտեսական տարբեր կողմնորոշումներ ունեցող արաբական աշխարհի համար արդի փուլում դժվար կլինի միասնական արաբական դիրքորոշում ունենալը:

---

<sup>1</sup> Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ) ստեղծվել է 1945թ. մարտի 22-ին, արաբական յոթ պետությունների կողմից: Լիգայի նպատակն արաբական երկրների սերտ համագործակցությունն է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, տեղեկատվական եւ կենսական այլ կարեւոր ուլորտներում: ԱՊԼ կանոնադրությունն արգելում է անդամ պետության դեմ ուժի կիրառումը: Լիգայի նստավայրը Կահիրեում է: Կազմակերպությանն անդամակցում են 22 արաբական պետություններ: ԱՊԼ-ն գումարում է պետությունների ղեկավարների զագաթաժողովներ եւ նախարարների մակարդակով կոնֆերանսներ: ԱՊԼ ներկայիս գլխավոր քարտուղարը Եգիպտոսի նախկին արտգործնախարար Ամր Մուսան է:

## «ՊԱՅՊԱՆԵԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Ժամանակակից Եվրոպայի պատմությունը գիտի մի քանի մարդկանց, որոնք Յիմ աշխարհի ժողովուրդների միավորման գործում հիրավի բացառիկ դեր են խաղացել: Նրանցից մեկն է ֆրանսիացի ֆինանսիստ եւ քաղաքական գործիչ **Ժակ Դեղորը**: Նրա՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահ եղած ժամանակ (1985-1995) Եվրոպական ընկերակցությունը վերափոխվեց Եվրոպական միության, առաջացավ միասնական ներքին շուկա, դրվեցին համաեվրոպական արժույթի ապագա ներդրման հիմքերը եւ ձեւակերպվեցին ԵՄ ընդարձակման չափորոշիչները: Վերջին տարիներին միասնական Եվրոպայի ռահվիրան (շուտով կլրանա նրա 82 տարին) քննադատորեն է արտահայտվում այն մասին, թե ինչ է կատարվում ԵՄ-ում:

**Չարց** - Շատերը գտնում են, որ մինչ նոր անդամ երկրների միացումը, ԵՄ-ին հարկավոր է ընդարձակման ճանապարհին արգելակել ու «շունչ քաշել»: Համաձայն եք Դուք այս կարծիքին:

**Պատ.** - Եվրոպայի ընդարձակումն ինքնին խնդիր չի առաջացնում: Բարդությունները ծագում են որոշ կարելու հարցերին պատասխանել փորձելիս: Հատկապես ի՞նչ կարող ենք անել մենք միացյալ Եվրոպայում: Ի՞նչ կերպ պետք է փոխգործակցեն 15 կամ 30 անդամները, որպեսզի խուսափեն Եվրոպական ինստիտուտների բյուրոկրատացումից եւ իրավաբանական կողմերի վրա նրանց չափազանց կենտրոնացումից: Որպեսզի պատասխանները ստանանք, հարկավոր է միացյալ Եվրոպայի նպատակների մասին հստակ, բոլոր անդամ երկրների կողմից ընդունվող պատկերացում ունենալ:

Վերջին տարիներին Եվրոպական երկրների միջեւ այլեւս զինված դիմակայություն թույլ չտալու գաղափարը խորապես ոգեւորեց երիտասարդներին. բազմաթիվ պատանիներ ու աղջիկներ եռանդուն կերպով սատարեցին քաղաքական գործիչների ջանքերին՝ այն կյանքի կոչելու համար: Այսօր մենք ունենք այն Եվրոպան, որին նրանք

հավատացել են: Արդարացրե՞լ է նա նրանց հույսերը: Ես գտնում եմ, որ այո:

Ներկայիս եվրոպական կառուցվածքին հարկ եղավ երեք փորձություն վերապրել, որոնցում նա իրեն լիովին կենսունակ դրսևորեց: Առաջինը՝ 1970-ականների սկզբին, երբ միասնական Եվրոպային միավորվեց Մեծ Բրիտանիան: Չնայած շատ հարցերում Լոնդոնի հատուկ դիրքորոշմանը եւ Միացյալ Նահանգների հետ նրա սերտ կապին, մենք, ընդհանուր առմամբ, Միացյալ Թագավորության ինտեգրման ոչ դյուրին խնդիրը հաղթահարեցինք:

Երկրորդ. հարկավոր է հիշեցնել այն պահը, երբ երեք եվրոպական երկրներ՝ Յունաստանը, Պորտուգալիան եւ Իսպանիան, որոնք դիկտատուրա էին ապրել, վերադարձան ժողովրդավարական կառավարման եւ անգամ դարձան միասնական Եվրոպայի մաս: Հենց ինձ վիճակվեց ավարտել Իսպանիայի ու Պորտուգալիայի ընդունման բանակցային գործընթացը: Մենք պե՞տք է նրանց մերժեինք միայն այն բանի համար, որ նրանց ինտեգրումը բարդ գործ էր եւ կարող էր մեզ համար ներքին խնդիրներ առաջացնել: Չնայած ամեն ինչին, մենք այդ երկրներին օգնության ձեռք մեկնեցինք, եւ տեսեք՝ ինչպիսի նշանակալից հաջողությունների են նրանք այսօր հասել:

Երրորդ. խորտակվեց Բեռլինյան պատը, իսկ նրա հետ միասին փլուզվեց կոմունիստական համակարգը Արեւելյան Եվրոպայի երկրներում: Մի՞թե նրանց պիտի ասվեր, որ՝ քանզի իրենց տնտեսությունը չափազանց թույլ է, իսկ հոգեմտածելակերպն անչափ տարբերվում է մերից, անհրաժեշտ է 20 տարի սպասել: Մենք համարեցինք, որ նման վերաբերմունքը կհակասեր եվրոպական արժեքներին, եւ ուստի նրանց ընդունեցինք մեր միության մեջ: Կարծում եմ՝ հարկավոր էր առավել հիմնավոր մոտենալ նրանց ընդունման կազմակերպմանը, սակայն, ամեն դեպքում, այն անհրաժեշտ էր:

*Հարց* - Դուք խոսեցիք նպատակների որոշման անհրաժեշտության մասին: Իսկ Դուք պատկերացնո՞ւմ եք, թե այսօր ինչ նպատակներ կարող է ունենալ Եվրոպան:

*Պատ.* - Անձամբ ես տեսնում եմ երեք գլոբալ նպատակ: Առաջինն այն է, որպեսզի ամեն կերպ պահպանել խաղաղությունն ու համաձայնությունը ժողովուրդների միջեւ: Երկրորդը՝ անել ամեն հնարավորը եվրոպական փոխադարձ համերաշխության զարգացման համար, ինչը

պետք է օգնի հավասարեցնել երկրների ու տարածաշրջանների զարգացման մակարդակները: Եվ երրորդը՝ եվրոպական ժողովուրդների մշակութային տարբերությունների պահպանումն է:

*Հարց* - Տարբերությունների պահպանում: Մի՞թե ինտեգրման նպատակը հակառակը չէ:

*Պատ.* - Ինձ համար միավորված Եվրոպան տարբերությունների միասնությունն է: Յուրաքանչյուր լեզու այս կամ այն ազգի ոգու արտացոլումն է: Մտնելով միասնական Եվրոպայի մեջ՝ ժողովուրդները դեն չեն նետում իրենց սեփական պատմությունը: Այս սկզբունքային պայմանը Եվրոպայի իսկական մեծությունն է:

Եթե սահմանափակ թվով ԵՄ անդամ երկրներ ցանկանում են ընթանալ ինտեգրման ուղով՝ զարգացնելով տնտեսական կամ մոնետար (դրամական) կապերը, ստեղծելով համատեղ տեխնոլոգիական գոտիներ կամ միասին գործելով արտաքին քաղաքականության կամ պաշտպանության ոլորտներում, նրանք, անշուշտ, դա կարող են անել: Երկրների քանակն այստեղ դեր չի խաղում: Մյուսները, եթե ցանկանան, հետագայում կարող են միանալ նրանց:

Սակայն պետք է տարբերել երկու հանգամանք: Ինչում ես իրոք կշտամբում եմ քաղաքական գործիչների եւ ղեկավարների ներկայիս սերնդին՝ այն է, որ նրանք շփոթում են երկու հասկացություն. միացյալ Եվրոպան՝ որպես այդպիսին եւ տարբեր հավաքական գործողությունները: Նման խառնումն էլ ավելի սխալ է, եթե խոսենք եվրոպական առաջապահ երկրների միասնական գործողությունների մասին: Խզումը շարժման ու արագության միջեւ միշտ գոյություն ունի եւ, անշուշտ, չի կարող չդրսելորվել տարբեր հավաքական գործողություններում:

Ասենք, պե՞տք էր, արդյոք, սպասել 15 պետությունների՝ այն ժամանակվա ԵՄ անդամների համաձայնությանը, որպեսզի շրջանառության մեջ դրվեր եվրոն: Այն ժամանակ, ինչպես նաեւ այժմ, միայն 12 երկիր էին համաձայն միասնական արժույթին: Ի՞նչ է, մեզ հարկավոր էր սպասել, մինչ մնացած երե՞քն էլ վերջապես համաձայնեին: Այս դեպքում միասնական արժույթը կարող էր ընդհանրապես չհայտնվել: Անհրաժեշտ է հաշտվել այն իրողությանը, որ որոշ պետություններ իրականացնում են ինչ-որ համատեղ գործողություններ, իսկ մյուսները դրանցում չեն մասնակցում:

Ցավոք, ինձ այդպես էլ չհաջողվեց համոզել իմ ընդդիմախոսներին,



որ Եվրոպային իրապես միավորում են միայն իմ կողմից թվարկված երեք նպատակները: Յնարավոր է՝ դրանք քաղաքական տեսանկյունից այնքան էլ գայթակղիչ չեն երեւում: Քո առջեւ դնել սոսկ երեք նպատակ՝ դա թեւ պարզ, սակայն իրագործելի մոտեցում է:

*Հարց* - Կարծում եմ՝ Դուք չէք զարմանա, եթե հաջորդի Թուրքիայի, Ուկրաինայի եւ, որոշակի վերապահումներով, Ռուսաստանի վերաբերյալ հարցը: Ինչպե՞ս վարվել նրանց հետ:

*Պատ.* - Թեպետ ես չեմ էլ ուրվագծում միացյալ Եվրոպայի վերջնական սահմանները, երեք դեպք առանձնակի է: Դրանք Յարավսլավիայի նախկին հանրապետություններն են, Ռուսաստանը եւ Թուրքիան: Ուկրաինան ու Բելառուսը առայժմ թողնենք մի կողմ: Նախկին Յարավսլավիայի տարածքում կազմավորված պետությունները պետք է տեղ գտնեն միավորված Եվրոպայում: Դա միակն է, որ կարող է հակազդել նրանց միջեւ էթնիկ հակամարտություններին: Խոսքն այն մասին չէ, որպեսզի ստիպել նրանց բնակիչներին ամեն ինչ մոռանալ, այլ այն, որ դադարեցնել կոնֆլիկտներն ու երկրորդ պլան մղել նախկինում այդ երկրները բաժանող փոխադարձ պահանջները: Այն թույլ կտա հետագայում խուսափել այնպիսի դրամաներից, ինչպես, օրինակ, Կոսովոյում էր:

Եթե խոսենք Ռուսաստանի մասին, ապա ռուսները շատ մեծ ազգ են, որոնք, ըստ էության, դրանով էլ հպարտանում են. չափազանց մեծ, որպեսզի ինտեգրվել նրա հետ այնպես, ինչպես Լեհաստանի կամ Չեխիայի: Ռուսաստանի հետ պետք է ստորագրել գործընկերության մասին համաձայնագիր՝ նախապես հստակեցնելով այն հարցը, թե որքանով ենք մենք միասնական գոյատեւման նպատակներին ու համագործակցության ձեւերին վերաբերող կարծիքներում: Բայց դա հասարակ գործընթաց չէ, ընդ որում՝ հավասարապես դժվար երկու կողմերի համար:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այստեղ դեպքը խորհրդանշական է: Յասարակությունների եւ, մասնավորապես, Եվրոպական ընկերակցության կայացման գործում խորհրդանշանները ոչ պակաս դեր են խաղում: Թուրքիան մուսուլմանական երկիր է, իսկ իսլամիստական ծայրահեղականության աճը սպառնում է ողջ աշխարհին: Առավել եւս, ի հայտ են գալիս իսլամական մոլեռանդներ, որոնք ժխտում են մեր գոյության իրավունքը սոսկ նրա համար, որ մենք, ինչպես համարում են

նրանք, տարբերվում ենք իրենցից: Սույն միտումները կարող են հեշտությամբ հանգեցնել տեղային կրոնական պատերազմների, եթե չասենք՝ քաղաքակրթությունների պատերազմի: Այս գունապատկերի վրա ես ասում եմ «այո» Թուրքիայի հետ բանակցություններին, որպեսզի ցուցադրել, որ Եվրոպան «կաթոլիկ գետտո», «կաթոլիկ կայսրություն» չէ, որպեսզի ընդգծել, որ չնայած իսլամական արմատականությանը, մենք ձեռք ենք մեկնում մյուսներին, փորձում ենք հասկանալ մեկս մյուսին: Բայց, բնականաբար, ես չեմ կարող ասել՝ հաջողությամբ կպսակվե՞ն, արդյոք, այս բանակցությունները:

Վկայակոչելով իմ կողմից նշված փաստերը՝ որոշ եվրոպական քաղաքական գործիչներ կտրականապես հանդես են գալիս ԵՄ Թուրքիայի մտնելուն դեմ: Կարծում եմ՝ նրանք ճիշտ չեն: Մենք պետք է հանդես գանք մարդկանց ընկերակցությամբ, որոնք, չլինելով ո՛չ պարզամիտ, ո՛չ դյուրահավատ, այնուամենայնիվ, ցանկանում են երկխոսություն վարել մյուսների հետ՝ նրանց, ովքեր հրաժարվում են իրենց հայացքների նեղությունից եւ սահմանափակությունից՝ պատմության աղբանոցը նետելով հատվածականությունը:

*Հարց* - Եթե վերանաք Ձեր քաղաքական հայացքներից, մի՞թե Ձեզ՝ որպես հավատացյալ մարդու, հասարակ եվրոպացու՝ կրթված կաթոլիկ ընտանիքում, չի զգաստացնում իսլամիզմի ներկայիս վերելքը Եվրոպայում:

*Պատ.* - Մենք կարողացանք յուրաքանչյուր եվրոպական պետության ներսում «մարսել» մուսուլմանների հետ գոյակցությունը: Ապրելով կողք կողքի մարդկանց հետ, որոնք այլ հավատք ունեն եւ հաճախ՝ կյանքի այլ փիլիսոփայություն՝ մենք ջանում ենք հետեւել փոխադարձ հարգանքի ու ամեն երկրի օրենքների պահպանման սկզբունքին: Դա, անշուշտ, այնքան էլ հեշտ չէ: Դժվարությունները, սակայն, բավարար փաստարկ չեն, որպեսզի միայն մեր փոխադարձ տարբերության պատճառով վերջնականորեն «ոչ» ասենք Թուրքիային:

Գոյակցությունը դրսեւորվում է տարբեր ձեւերում, եւ դրանք կարգավորող օրենքները տարբեր երկրներում ամենեւին էլ միանման չեն: Այն կապված է ամբողջ շարք խնդիրների հետ, որոնցից շատերը դեռ հեռու են լուծումից: Այնուամենայնիվ, չի կարելի ժխտմանը ժխտմամբ, ատելությանն ատելությամբ, ուժին ուժով պատասխանել: Եթե մենք մտնենք այդ արատավոր շրջանը, ապա այլեւս չենք կարող

միասին ապրել: Եթե մենք ի վիճակի չլինենք եվրոպական ընկերակցության ներսում պահպանել խաղաղությունն այլահավատների հետ, ապա ինչպե՞ս անել մնացած ողջ աշխարհում: Մյուս երկրներին մենք ի՞նչ օրինակ կծառայենք:

*Չարդ* - Քաղաքական գործիչները չեն սիրում մեզ սպասվող ապագայի մասին հարցերը: Բայց քանզի Դուք ինքներդ հիշատակեցիք, թե տարբեր երկրներ կարող են ունենալ ապագայի մասին տարբեր պատկերացումներ, ապա ցանկություն է առաջանում իմանալ այդ մասին նաեւ Ձեր սեփական կարծիքը:

*Պատ.* - Նախեւառաջ կցանկանայի շեշտել, որ չեն հավատում գալիք աղետներին, որոնք կհանգեցնեն աշխարհի վախճանի: Անշուշտ, գլոբալացումն իր հետ բերում է ոչ քիչ խնդիրներ: Մենք պետք է ձգտենք առավել արդյունավետ կերպով կարգավորել գլոբալացման գործընթացները, ինչը, ընդհանուր առմամբ, նշանակում է լավագույն համաշխարհային կառավարում: Օրինակ, անհրաժեշտ է այնպիսի երկրների, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան, որոնց տնտեսությունը զարգանում է արտակարգ արագ տեմպերով, պարտավորեցնել հարգել ու պահպանել շրջակա միջավայրի պահպանման թեկուզ նվազագույն կանոնները: Բացի այդ, նրանց հարկ է իրենց մոտ մտցնել որոշակի սոցիալական նորմեր, այլ ոչ թե կողմնորոշվել լոկալ առևտրային շահ ստանալուն:

Անտարակույս, աշխարհը շարժվում է մեծ փոխկախվածության եւ սոցիալական ու բնական գործոնների նկատմամբ առավել ուշադիր վերաբերմունքի ուղղությամբ, թեեւ չի կարելի խուսափել գլխավոր ուղուց շեղումներից: Որպեսզի տնտեսական զարգացումը չկործանի մեր «ալեւոր» երկիր մոլորակը, միայն եվրոպացիների ճիգերը բավարար չեն: Անհրաժեշտ է, որ նույն Չինաստանը եւ նաեւ Ռուսաստանը այս սպառնալիքին դիմակայելու նպատակով ավելի շատ ջանք թափեն:

Իսկ քաղաքական պլանում բավական շատ են տազնապալի գործոնները: Առաջին հերթին դա, այսպես կոչված, կրոնների պատերազմն է եւ տարբեր ծայրահեղական դրսեւորումները: Շատ երկրներ «գլորվում» են դեպի ազգայնականություն կամ ձգտում միջազգային ասպարեզում ինչ-որ առանձնահատուկ դեր խաղալ:

Ինձ թվում է, որ ապագա զարգացումը պետք է Ռուսաստանի, Եվրամիության ու Միացյալ Նահանգների միջեւ հանգեցնի հիրավի

համապարփակ պայմանավորվածության ձեռքբերման. պայմանավորվածություն, որը կսահմանի ընդհանուր նպատակները եւ կցուցաբերի երկխոսության հաստատման ու փոխզիջումների որոնման միասնական ձգտումը: Դա չի նշանակում, թե հենց տվյալ երրորդությունը կգերիշխի աշխարհում. չէ՞ որ պետք է ավելի շատ հաշվի առնել Չինաստանին, ՅՈւԷՍ-ին եւ Լատինական Ամերիկայի երկրներին, հատկապես՝ Բրազիլիային:

**«Россия в глобальной политике»,  
№ 1, 2007**

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Ռուբեն Մելքոնյան</b> <b>«ԾՊՏՅԱԼ» ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ</b> <b>ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>1</b>
<b>Սուրեն Սարյան</b> <b>ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ</b> .....	<b>6</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b> <b>ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ</b> <b>ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b> .....	<b>12</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b> <b>ՌՈՒՄԱՍՏԱՆ–ՂԱՋԱԽՍՏԱՆ.</b> <b>ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ</b> .....	<b>17</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b> <b>«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ» ՆԱԽԱԳԾԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>22</b>
<b>Սարգիս Հարությունյան</b> <b>ԻՐԱՔԻՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՌԱԶՄՈՒԺԻ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ</b> <b>ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>27</b>
<b>Արաքս Փաշայան</b> <b>ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ</b> <b>ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ</b> .....	<b>33</b>
<b>Ժակ Դելոր</b> <b>«ՊԱՀՊԱՆԵԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ</b> <b>ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»</b> .....	<b>38</b>

*Շապիկի վրա պատկերված է տեսարան  
Վանա լճի Կտուց կղզուց*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: